

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ

Հոդվածների ժողովածու

Երևան
Լուսակն
2024

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(52)
Պ 516

**Ժողովածուն տպագրության է երաշխավորել
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Բանասիրական
ֆակուլտետի խորհուրդը**

Խմբագիր՝ Մայա Գրիգորյան
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն

Պերճ Պոռոջյան: Հոդվածների ժողովածու.- Երևան: Լուսակն,
Պ 516 2024.- 86 էջ:

Ժողովածուում ամփոփված են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի, նաև Բանասիրական ֆակուլտետի մի քանի դասախոսների գիտական հոդվածները՝ նվիրված Պերճ Պոռոջյանի ստեղծագործության մի շարք խնդիրներին:

Ժողովածուն օգտակար է Բանասիրական ֆակուլտետների ուսանողության, հայ գրականության ուսուցիչների, Պերճ Պոռոջյանի ստեղծագործությունը բարձր գնահատողների համար:

ՀՏԴ 821.19.0
ԳՄԴ 83.3(52)

ISBN 978-9939-968-76-6

© Լուսակն, 2024

ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ
ԱՌԱՋԻՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ
ԲԱՑԱԾ ԴԱՍԱԿԱՆ ԳՐՈՂ
ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

Պերճ Պոռոշյանը հայ նոր գրականության դասականներից է, որը որոշակի և մեծ ծառայություն ունի հայ դպրոցի զարգացման գործում: Բավական է հիշել, որ նրա ջանքերով առաջին անգամ հայ աղջիկների համար իզական դպրոցներ են բացվել Թիֆլիսում, Շուշիում և Ագուլիսում: Նա մասնակցել է նաև պրոֆեսիոնալ նոր թատրոնի հիմնադրմանը:

Պոռոշյանը հիանալի հուշեր է թողել Խաչատուր Աբովյանի մասին, երբ վերջինս մանուկ Պոռոշյանին հանդիպել է դպրոցում, զարմացել նրա ուշիմությամբ և հիացել վերջինիս ընդունակություններով:

Փայլուն կրթություն է ստացել Ներսիսյան դպրոցում: Կաթողիկոս Ներսես Աշտարակեցին հիացել է ուսումնաստենչ աշակերտով, սակայն այդ հիացումը սառել է, երբ իմացել է, որ Պոռոշյանը չի կամենում հոգևորական դառնալ: Ներսիսյան դպրոցի տարիները նրան տվել են գրաբարի ու հայ ժողովրդի պատմության, նաև քրիստոնեական կրոնի խոր գիտելիքներ:

1858 թ. իր մտերիմներից մեկի տանը՝ Թիֆլիսում, Պոռոշյանը կարդում է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, խանդավառվում վեպի գաղափարներով և դրա ազդեցությամբ գրում իր անդրանիկ գործը՝ «Սոս և Վարդիթերը», որն արժանանում է մեծն Միքայել Նալբանդյանի հետաքրքիր գրաքննադատական գնահատականին: Դրանից հետո շատ վեպեր է գրել Պոռոշյանը՝ «Ցեցեր» (1889), «Բղդե» (1890), «Հունո» (1900), «Շահեն» (1880), «Սկիզբն երկանց» (1892) և այլն: Ճանաչողական մեծ արժեք ունեն նրա ինքնակենսագրական «Հուշիկները»:

Զբաղվել է նաև թարգմանությամբ: Թարգմանել է Լև Տոլստոյի «Կովկասի գերին» (1891), «Մանկություն և պատանեկություն» (1899), Զարլգ Դիկկենսի «Դավիթ Կոպերֆիլդ» (1897), Նիկոլայ Գոգոլի «Ամուսնություն» (1904) և այլ հեղինակների գործեր: Աշխարհաբար է թարգմանել «Ավետարանը», որի համար Գևորգ Չորրորդ Ամենայն

հայոց կաթողիկոսը նրան շնորհել է աստվածաբանության մագիստրոսի կոչում:

Պռոշյանի գլուխգործոցը «Հացի խնդիր» վեպն է, որն ունի ճանաչողական և ուսուցողական մեծ արժեք:

Դասական գրողին և մեծ մանկավարժին է նվիրված Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դասախոսների հողվածների ժողովածուն՝ ի նշան գրողի, մեծ հումանիստի և մանկավարժի նկատմամբ ունեցած խորին հարգանքի:

Պրոֆեսոր Աելիտա Ղուլիսանյան

ПРЕДИСЛОВИЕ

Перч Прошян является классиком новой армянской литературы, сыгравшим значимую роль в развитии армянской школы. Достаточно отметить, что благодаря его усилиям были открыты женские школы для армянских девочек в Тифлисе, Шуши и Агулисе. Он принял участие также в создании нового профессионального театра.

Весьма ценны воспоминания П. Прошяна о Хачатуре Абовяне, который познакомился с Прошяном-школьником, восхитившим его своими способностями и прилежностью.

Перч Прошян получил блестящее образование в гимназии Нерсисян. Католикос Нерсес Аштаракеци восхищался тягой мальчика к знаниям, однако его постигло разочарование, когда он узнал, что Прошян не желает стать священнослужителем. Своими глубокими знаниями по истории армянского народа, древнеармянскому языку (грабару) и истории религии, в частности христианства, он был обязан именно гимназии Нерсисян.

В 1858 г., у одного из близких тифлисских друзей Прошян имел возможность ознакомиться с романом Х. Абовяна «Раны Армении».

Воодушевленный и впечатленный идеями Абовяна, он написал свое первое произведение «Сос и Вардитер», удостоившееся интересной критической оценки великого Микаела Налбандяна. Впоследствии Прошяном были созданы романы «Цецер» (1889), «Бхде» (1890), «Уно» (1900), «Шаен» (1880), «Начало родовых мук» (1892) и другие. Огромную познавательную ценность являют собой его автобиографические «Воспоминания».

Писатель занимался также переводческой деятельностью. Им были переведены «Кавказский пленник» (1891), «Детство и отрочество» (1899) Льва Толстого, «Дэвид Копперфильд» (1897) Чарльза Диккенса, «Женитьба» (1904) Николая Гоголя и произведения других авторов. П. Прошяном было переведено на современный армянский язык «Евангелие», и за этот бесценный труд католикос Геворг IV присвоил ему звание магистра богословия.

Шедевром его творчества является роман «Из-за хлеба», являющий собой огромную познавательную и учебно-воспитательную ценность.

Классику литературы и великому педагогу посвящен сборник статей преподавателей филологического факультета Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна в знак глубокого уважения памяти писателя, великого гуманиста и педагога.

Профессор Аэлита Долуханян

FOREWORD

Perch Proshyan is a classic of new Armenian literature, who has played a significant role in the development of the Armenian school. It is enough to note that thanks to his efforts, girls' schools for Armenian girls were opened in Tiflis, Shushi and Agulis. He also took part in the creation of a new professional theater.

Perch Proshyan's memoirs about Khachatur Abovyan, who met Proshyan as a schoolboy, and delighted him with his abilities and diligence, are very valuable.

Perch Proshyan received an excellent education at the Nersisyan Gymnasium. Catholicos Nerses Ashtaraketsi admired the boy's thirst for knowledge, but he was disappointed when he learned that Proshyan did not want to become a clergyman. He owed his deep knowledge of the history of the Armenian people, the ancient Armenian language (grabar) and the history of religion, in particular Christianity, to the Nersisyan Gymnasium. In 1858, Proshyan had the opportunity to read Kh. Abovyan's novel "Wounds of Armenia" at the home of one of his close friends in Tiflis.

Inspired and impressed by Abovyan's ideas, he wrote his first work "Sos and Varditer", which received an interesting critical assessment from the great Mikael Nalbandyan. Subsequently, Proshyan created the novels "Tsetser" (1889), "Bghde" (1890), "Huno" (1900), "Shahen" (1880), "The Beginning of Labor Pains" (1892) and others. His autobiographical "Memories" are of great educational value.

The writer was also engaged in translation activities. He translated "The Prisoner of the Caucasus" (1891), "Childhood and Adolescence" (1899) by Leo Tolstoy, "David Copperfield" (1897) by Charles Dickens, "The Marriage" (1904) by Nikolai Gogol and works by other authors. P. Proshyan translated "The Gospel" into modern Armenian language, and for this invaluable work, Catholicos Gevorg IV awarded him the title of Master of Theology.

His masterpiece is the novel “For the Bread”, which is of great educational and cognitive value.

A collection of articles by teachers of the Philological Faculty of the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan is dedicated to the classic of literature and great teacher as a sign of deep respect for the memory of the writer, great humanist and pedagogue.

Professor Aelita Dolukhanyan



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՐՄԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԸ

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԻԶ

Ներածություն

Պերճ Պրոշյանի կյանքի և ստեղծագործության մասին գրել են շատերը: Նրա մահվանից մեկ տարի անց՝ 1908 թ., Նոր Նախիջևանում տպագրվում է Ավ. Տեր-Հարությունյանի «Պրոշյան և նրա գրական գործունեության արժեքը» 56 էջանոց գրքուկը¹, որն առաջին ծավալուն մեկնաբանությունն էր Պրոշյանի ողջ ստեղծագործության մասին:

Պրոշյանը եղել է Հովհաննես Թումանյանի «Վերնատան» ոչ հիմնական, սակայն հաճախակի այցելուներից: Թումանյանը հատկապես գնահատել է հայ գյուղացու և հայ գյուղի նրա խոր ճանաչումը. «Բայց ժողովրդի կյանքը էնպես էր ճանաչում, մեր հին ու նոր լեզուն էնպես գիտեր- էլ դու պրծա՛ր...Իսկ մեր երիտասարդ գրողների մեջ ես էդ բանը չեմ տեսնում. ձեր ու ձեր ընկերների գրածները մեծ մասամբ կյանքից ուզում եմ ասել՝ ժողովրդի կյանքից կտրված բաներ են...»²:

¹ Ավ. Տեր-Յարութիւնեան, Պրոշեան եւ նրա գրական գործունեութեան արժեքը, Նոր-Նախիջեան, 1908, 56 էջ:

² Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2009, էջ 111:

Խորհրդային տարիներին առավել մեծանում է ուշադրությունը Պռոշյանի ստեղծագործության նկատմամբ: Նրա կյանքը, ստեղծագործությունը ուսուցանվում են ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատությունների բանասիրական ֆակուլտետներում, այլև որպես ծրագրային նյութ՝ այն անցնում էին միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում:

1964 թ. ՀՀ ԳԱԱ ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի «Հայ նոր գրականության պատմության» երրորդ հատորում երրորդ գլուխը նվիրված է Պերճ Պռոշյանին ու հեղինակն է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը³: Հետագայում գրականագետը մի քանի անգամ ծավալուն հոդվածներով նորից անդրադարձել է Պռոշյանի ստեղծագործությանը⁴:

1938 թ. նշանավոր բանագետ Արամ Ղանալանյանը հրատարակում է «Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը» արժեքավոր հետազոտությունը: Նշենք, որ նախապես՝ 1937 թ., Հր. Մուրադյանը ներկայացրել էր Պ. Պռոշյանի կյանքի պատմությունը՝ լույս ընծայելով այն «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարով⁵: Հետաքրքիր է, որ գրքում չի նշվում Պռոշյանի Ժնև և Փարիզ կատարած ուղևորության մասին, որն այնքան գեղարվեստորեն ու վավերական շեշտերով Ալեքսանդր Շիրվանզադեի նկարագրել է իր «Կյանքի բովից» հուշագրության մեջ: Դրանից իմանում ենք նաև, որ Պռոշյանը Փարիզ էր գնացել Մանթաշյանին հանդիպելու և իր ամսական նպաստը մի քիչ ավելացնելու համար: «Մանթաշյանը ծերունուն շատ սառը ընդունեց, այնուամենայնիվ, իմ միջնորդությամբ մի որոշ գումար տվեց նրան»⁶:

Պռոշյանի կյանքին ու գործին նոր անդրադարձ կա դարձյալ «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարով 1988 թ.: Գրքի հեղի-

³ Հայ նոր գրականության պատմություն, հտ. 3, Երևան, 1964, էջ 227-269:

⁴ Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, գիրք III, Երևան, 2002, էջ 155-196: Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, Երևան, 2004, էջ 152-158:

⁵ Հր. Մուրադյան, Պռոշյանի կյանքը, Համառոտ ակնարկ, Երևան, 1937:

⁶ Ալ. Շիրվանզադե, Կյանքի բովից, Ուղեգրություններ, Հուշեր, Երևան, 1988, էջ 171:

նակն է գրականագետ Սարիբեկ Մանուկյանը: Մինչ այդ լույս էր տեսել գրականագետ Արշալույս Բաբայանի «Պերճ Պռոշյան» մենագրությունը, որի հիման վրա վերջինս ստացել էր բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Այդ գիրքը, որպես բնաբան, ունի Թումանյանի՝ Պռոշյանին նվիրված բանաստեղծության հետևյալ քառատողը.

*Հայ գյուղացին ցավեր ուներ
Խեղդված իրեն խուլ խրճիթում,
Այն ցավերին լեզու տվիր,
Ու խոսեցիր ամեն սրտում⁷:*

Բոլոր գրքերի ու հոդվածների մեջ, իհարկե, լիովին տարբերվում է ակադեմիկոս Արսեն Տերտերյանի «Պերճ Պռոշյան» մենագրությունը, որը լույս է տեսել 1955 թ.՝ գրականագետի մահից հետո:

Արսեն Տերտերյանի գնահատականները՝ տրված Պերճ Պռոշյանի ստեղծագործությանը

1982 թ. ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես»-ի 4-րդ համարում լույս է տեսնում Սերգեյ Սարինյանի «Արսեն Տերտերյան» (Ծննդյան 100-ամյակի առթիվ) փաստահարուստ ծավալուն հոդվածը: Սարինյանը, որի գրականագիտական-վերլուծական մեթոդը սերտորեն առնչվում էր աշխարհի նշանավոր փիլիսոփաների աշխատություններին, գրում է. «Հասարակություն-անհատ-ազատություն կատեգորիաների գիտական բացատրությունն առնչելով Սպենսերի և Դարվինի ուսմունքներին՝ նա բացառիկ նշանակություն է հատկացնում տաղանդի ստեղծագործական ունակությանը՝ հասարակական գիտակցությունը առաջադիմական գաղափարներով տոգորելու գործում»⁸:

Այս բնորոշումն ընդհանրական է Տերտերյանի ողջ գրականագիտական ժառանգության համար: Իսկ այդ ժառանգությունը վիթխա-

⁷ Ա. Բաբայան, Պերճ Պռոշյան, Երևան, 1962, էջ 3:

⁸ Ս. Սարինյան, Արսեն Տերտերյան (Ծննդյան 100-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1982, թ. 4, էջ 35:

րի է, բազմահեղինակ, բազմաթեմա: Թվարկենք այն հեղինակների անունները, որոնց Տերտերյանը նվիրել է առանձին հետազոտություններ՝ Վահան Տերյան, Միքայել Նալբանդյան, Հովհաննես Թումանյան, Բաֆֆի, Երվանդ Օտյան, Խաչատուր Աբովյան, Հակոբ Պարոնյան, Ալեքսանդր Շիրվանզադե, Նար-Դոս, Ղազարոս Աղայան, Գրիգոր Զոհրապ, Օերենց, Գաբրիել Սունդուկյան, Հովհաննես Հովհաննիսյան, Պերճ Պոռոջյան: Հատուկ ուսումնասիրություններ ունի՝ նվիրված Վիսարիոն Բելինսկուն ու Վալերի Բրյուսովի՝ հայ մշակույթին տված գնահատականներին, նաև Իվան Կոլիլովին ու Ալեքսանդր Պուշկինին:

Տերտերյանի գրաքննադատական ու գրականագիտական մեկնաբանությունները խիստ ինքնատիպ են և նման չեն այդ ժամանակահատվածի հայ նշանավոր գրականագետների հայացքներին: Նա ավարտել էր Շուշիի հոգևոր սեմինարիան (1902), Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1905), սովորել Ս. Պետերբուրգի նյարդահոգեբանական ինստիտուտում (1907-1909): Այս ամենով հանդերձ՝ նրա գրականագիտական ու գրաքննադատական մոտեցումներում որոշակի ուժեղ են դասակարգային շերտավորմամբ հասարակության տարբեր խավերին ներկայացնող հերոսներին տրված գնահատականները: Այս իրողությունը հստակորեն բացահայտում է նաև գրականագիտական մտքի հետաքրքիր էվոլյուցիան՝ կախված գրողի ապրած երկրի գաղափարախոսությունից ու աշխարհայացքից:

Տերտերյանի կարծիքով՝ համակրանք տաճելով ռուս ժողովրդի և ռուս գրականության հանդեպ՝ Պոռոջյանը մի առանձին հակակրանքով է խոսել էվրոպական դիպլոմատիայի՝ բարեկամ ձևացող անգլիացիների ու ամերիկացիների մասին: Նա փաստերով ցույց է տալիս Անգլիայի ստոր քաղաքականությունը⁹:

Մեր օրերի ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահեն իր «Histoire de l'Arménie» (Paris, 2012) գրքում նշում է, թե մեծբրիտանացիները մշտապես օգնել են օսմանցիներին՝ ընդդեմ հայերի¹⁰:

⁹ Ա. Տերտերյան, Պերճ Պոռոջյան, Երևան, 1955, էջ 10:

¹⁰ Տե՛ս Ա. Դոլուխանյան, Ժան-Պիեռ Մահեն հայագետ, Երևան, 2020, էջ 212:

Խորամուխ լինելով Պռոշյանի ստեղծագործության մեջ՝ Տերտերյանն ընդծում է, որ ըստ Պռոշյանի՝ իսկական հայի իդեալը ոչ թե փողն է, այլ հողը¹¹: Նա համաձայն չէ այն գրականագետների հետ, որոնք համոզված պնդում են, թե Պռոշյանի մոտ հաջողված են բացասական տիպերը: Նրա կարծիքով՝ Պռոշյանը ստեղծել է դրական տիպերի իր պատկերասրահը¹²:

Լիբերալ-բուրժուական քննադատները ժխտել են Պռոշյանի երկերի գեղարվեստականությունը, մինչդեռ Պռոշյանի գեղարվեստականությունը երևում է նրա երգիծանքում ու տիպեր կերտելու վարպետության մեջ¹³:

Տերտերյանը խիստ կարևորում է Պռոշյանին որպես նորարար ճանաչող Միքայել Նալբանդյանի գնահատականները, նաև հիշեցնում է, թե այդ հեղինակին ըստ արժանվույն գնահատել են Ղազարոս Աղայանը, Հովհաննես Հովհաննիսյանն ու Հովհաննես Թումանյանը¹⁴:

Նա խորին համակրանքով է խոսում Պռոշյանի մանկավարժական ուսանելի գործունեության մասին, ցասումով է լցված հայկական դպրոցներում տիրող ոստիկանական ռեժիմի դեմ: Հոգևոր դպրոցներում պատրաստում էին հլու-հպատակներ՝ ցարիզմին ու կղերականությանը ծառայելու համար:

Պռոշյանին քննադատել են բազմազիտակ չլինելու, համաշխարհային գրականության նշանավոր գործերին ծանոթ չլինելու մեջ: Տերտերյանը նրան համարում է մեր նշանավոր թարգմանիչներից մեկը, որին բարձր է գնահատել թարգմանական գործի հրաշալի գիտակ Հովհաննես Հովհաննիսյանը¹⁵:

Տերտերյանին հատկապես գոհացրել են Պռոշյանի հուշերը, որոնցում հրաշալի ու անխարդախ ձևով պատկերված է գրողի ապ-

¹¹ Ա. Տերտերյան, Նշվ. աշխ., էջ 12:

¹² Նույն տեղում, էջ 17:

¹³ Նույն տեղում, էջ 18:

¹⁴ Նույն տեղում, էջ 25:

¹⁵ Նույն տեղում, էջ 39:

րած ժամանակահատվածի հայ կյանքը: Այդ երևույթը նա բնութագրում է ռուս բանաստեղծի հետևյալ դիպուկ երկտողով.

*Тут не одно воспоминание,
Тут жизнь заговорила вновь*¹⁶.

Պոռոշյանը յուրովի է ըմբռնել լուսավորության խնդիրը: Նա շատ մեծ դեր է կատարել հայ կանանց կրթության գործում և նպաստել է կանանց առաջընթացին:

Պոռոշյանը քննադատել է ցարիզմին՝ ցույց տալով գյուղերում կատարվող հարկահանության ցնցող տեսարանները:

Որպես ռեալիստ հեղինակ՝ Պոռոշյանը քննադատել է կղերակախության վարքագծի ստվերոտ կողմերը, ու գրականագետը մասամբ դրանով է բացատրում, որ գրողը «խիստ մերժեց իր վրա վերցնել կրոնական սքեմը»¹⁷:

Տերտերյանը գրում է. «Մի սպանիչ ծաղր ունի ժողովրդական գրողը, թե ինչպես Միկիտան Սաքոն փախչելուց առաջ՝ իր հանցանքների պատժից ազատվելուց առաջ, հետքը կորցնելու համար խանութում... խունկ ու մում է ծխում իր հոր հոգու համար»¹⁸:

Տերտերյանի «Պերճ Պոռոշյան» գրքի ամեն էջում կարելի է գտնել բուրժուազիա և շահագործում բառերը: Նրա կարծիքով Պոռոշյանի վեպերը հայի հին գյուղի բողոքի ծնունդն են:

Կապիտալիստական հարաբերությունները քայքայում են գյուղը. մեծ սեփականատերերը կլանում են փոքրերին: Հայ կինը ծանր վիճակում է. «Աղջիկ ծնող կինը դառնում է անմեղ մեղավոր»¹⁹:

Տերտերյանը շարունակ շեշտում է, թե հալալ աշխատանքը և անսահման աշխատասիրությունը մարդկային կյանքի հիմքն են, և հենց այդ ճշմարտությունը Պոռոշյանի երկերի հիմնական գաղափարախոսությունն է:

¹⁶ Նույն տեղում, էջ 43:

¹⁷ Նույն տեղում, էջ 60:

¹⁸ Նույն տեղում, էջ 67:

¹⁹ Նույն տեղում, էջ 81:

Վաղնջական ժամանակներից է գալիս այս պատվիրանը. այն կա զրադաշտական կրոնի սրբազան մատյանում՝ Ավետալայում: Նրանում մարդուն, գերագույն աստծու անունից, հրահանգ է տրվում օր ու գիշեր աշխատել, աճեցնել հացահատիկ, մրգեր, տնային կաթնատու կենդանիներ: Ամենակարևորն այն է, որ Ավետան խստորեն մերժում է մուրացկանությունը, ուրիշ մարդուց նյութական բարիք խնդրելը: Այս գաղափարախոսությունն անցել է նաև քրիստոնեությանը, և այն առկա է հանճարեղ Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի զոգրութեան» երկի և ոչ մեկ հատվածում.

Ընչաշատները չեն հաճում երբեք
Լիացածների դռների առաջ,
Ու չեն սպասում հղիացածները ամեն բարիքով՝
Թափփուկներիս սեղանի հացի:²⁰

Եթե աշխատավորը ծուլ է, ուրեմն կլինի.

Գաղձախեղդ այգի, որդնահարված որթ,
Ուտիճակեր հասկ, փշաբեր պարտեզ...²¹
Որո՞ւմ ու տատասկ ցանող երկրագործ...²²

«Հալալ աշխատանքը գովերգելով՝ Պռոշյանը քամահրանքով է վերաբերվել անաշխատ կյանքով ապրողներին: Նա մեջբերում է մի գեղեցիկ ասացվածք. «Հացը հացարարին տուր, մինն էլ ավելի», այսինքն՝ ով չի աշխատում, ուտելու իրավունք չունի»²³:

Պռոշյանը գրում է և զգուշացնում ժողովրդական վրեժխնդրության մասին: Նորից դիմելով ժողովրդական բանահյուսությանը՝ ներկայացնում է, թե փոքրիկ մրջյունը կարող է հաղթել մեծ գազանին՝ մտնելով նրա ականջը և շշմեցնելով նրան²⁴: Այս փաստը գտնում ենք

²⁰ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Երևան, 1979, էջ 351:

²¹ Նույն տեղում, էջ 335:

²² Նույն տեղում, էջ 335:

²³ Ա. Տերտերյան, Նշվ. աշխ., էջ 83:

²⁴ Նույն տեղում, էջ 91:

դեռ XII դարում՝ «Արջը և մրջյունը» առակում: Արջը փորում էր մրջյունների բույնը և ուտում նրանց: Մրջյունները օգնության են կանչում իրենց նման փոքր միջատներին՝ գոռեխին, պիծակին, մժեղին, շնաճանճին, կրետին ու սկսում են կծոտել արջին, որը խայթոցներից տանջվելով՝ ընկնում է ջուրն ու խեղդվում: Առակի բարոյախոսական մեկնաբանության մեջ հզորներին զգուշացնում են երկնչել փոքրերից. «Սակայն իմաստութեամբ զորանան փոքունք եւ յաղթեն հզորաց»²⁵:

Որպես ժողովրդական ըմբոստներ՝ Պռոշյանի երկերում առանձնանում են ճշմարտախոս Հաքուլը և Հունոն:

Տերտերյանի «Պերճ Պռոշյան» մենագրության IV գլուխը կոչվում է «Պռոշյանի դեմոկրատական հայրենասիրությունը»:

Պռոշյանը դեմ էր կոսմոպոլիտիզմին, այն անվանում էր տխրահռչակ: Նա խստորեն մերժում էր ազգադավությունը և բերում էր թուրքերի հետևյալ ասացվածքը. «Յուր ազգը կորցնողը ապօրինի գավակ է»²⁶: Տերտերյանը ճշտորեն նկատում է, թե իր վեպերում, այդ հարցում էլ հետևելով Աբովյանին, Պռոշյանը հանդես է գալիս որպես գործող անձ:

Տերտերյանն էլ, Մ. Նալբանդյանի նման, Պռոշյանի երկերում եղած բնության տեսարաններում տեսնում է գեղարվեստականություն: Անվերապահորեն ընդունելով Պռոշյանի վեպերում տարբեր տիպեր կերտելու վարպետությունը՝ գրականագետը նշում է նաև վիպասանի թերությունները. «Ամենից էականն այն է, որ նա պատկանում է վիպասանների այն շարքին, որոնց կարելի է անվանել շնչասպառ պատմող. այսինքն մարդիկ, որոնք պատմելու շատ բան ունեն և ասես վազում են առաջ՝ ժամանակ չունենալով որոշ դիտումներ սոցիալապես և հոգեբանորեն հիմնավորելու»²⁷:

Կարևոր է մենագրության «Պռոշյանի գրական ուղղության խնդիրը» գլուխը: Այս խնդիրը գրականագետների շրջանում վեճեր է առաջացրել:

²⁵ Մ. Գոշ, Առակներ, Վենետիկ, 1854, էջ 124:

²⁶ Ա. Տերտերյան, Նշվ. աշխ., էջ 103:

²⁷ Նույն տեղում, էջ 131:

Գիտենք, որ XIX դարի երկրորդ կեսից հատկապես ռուս գրականության մեջ կենսական պահանջ դարձավ հասարակական կյանքի չարիքներից ելք առաջարկել գրական գործերում: Դրա վառ ապացույցը ռուս գրականության մեջ Չերնիշևսկու «Ինչ անել» վեպն է, իսկ հայ գրականության մեջ՝ Բաֆֆու «Կայծերը»:

Տերտերյանի կարծիքով՝ Պոռոշյանը գրել է քննադատական ռեալիզմի մեթոդով. «Նրա երկերը խոսուն են շատ ավելի, քան որոշ պատմագիրների ուսումնասիրությունները, որոնք չունեն նրա խորությունը և բազմակողմանիությունը»²⁸: Գրականագետը ներկայացնում է Պոռոշյանի ռեալիզմի բնութագրման նոր եզրույթը՝ ժողովրդական ռեալիզմ²⁹:

Կին կերպարների պատկերման մեջ, սակայն, երևում է նաև Պոռոշյանի ռոմանտիզմը: Ի դեպ, այս հարցում էլ Պոռոշյանը հետևել է Աբովյանին, որի «Վերք Հայաստանի» վեպում Քանաքեռի կանայք պատկերված են ռոմանտիկ ձևով: Նրանք նման են հայ ժողովրդական հեքիաթներում նկարագրված հուրի փերիներին: Եթե այդ ջահել կանանց նայեիր, կուշաթափվեիր. մետաքսի մեջ կորած էին, շքեղ հագնված, ոսկի գոտիով, թանկարժեք քարերով մատանիներով, կրծքին ոսկի քորոց, ականջներին ոսկե և մարգարտե ականջօղեր: Թվում էր, թե ամեն մի տղամարդ խանի կամ բեկի զավակ է³⁰:

Աբովյանի եռահատոր ընտիր երկերի ծավալուն առաջաբանը, որը խորագրված է «Համառոտ ակնարկ», հիմնական գծերով ներկայացնում է Աբովյանի կյանքը, ու երեք ծավալուն հատորներում ընդգրկված գործերի գրականագիտական վերլուծականը: Հեղինակն է Ռուբեն Զարյանը (հետագայում՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ու Արվեստի ինստիտուտի տնօրեն):

Երիտասարդ Ռ. Զարյանի 1939 թ. գրած առաջաբանը լիովին տարբերվում է Ա. Տերտերյանի գրականագիտական, վերլուծական

²⁸ Նույն տեղում, էջ 137:

²⁹ Նույն տեղում, էջ 139:

³⁰ Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հտ. I, Երևան, 1939, էջ 31:

մեկնաբանություններից: Այն ավելի հարազատ է մերօրյա գրականագիտական մեկնություններին³¹:

Հետաքրքիր է Տերտերյանի հետևյալ միտքը. «Ինչպես Պռոշյանի ռեալիզմը դեմոկրատական ռեալիզմ էր, այնպես էլ նրա ատրիբուտը կազմող ռոմանտիզմը դարձյալ դեմոկրատական հանգավորում ունի»³²:

Իր գրքում Տերտերյանն առանձին գլխով անդրադարձ ունի Պռոշյանի երկերի գեղարվեստական արժեքին: Նրա կարծիքով՝ Շիրվանզադեն կասկածել է, որ Պռոշյանը տաղանդավոր մեծություն է: Այդ բնորոշմանը գրականագետը համամիտ չէ, որովհետև «Եթե գրողը մեծ գրող է, նա պետք է արտացոլի իր էպոխայի էական կողմերը»³³:

Տերտերյանը նշում է նաև գրողի վեպերի մեջ եղած որոշ անհարթություններ, նաև կրկնություններ:

Պռոշյանն իր գնահատականներն ունեւր՝ տրված հայ գրողներին: Իր «Հուշիկներում» Աբովյանին անվանում է «Հայ ազգի նոր գրականության լուսատու աստղ» և «Ժամանակից առաջ ծնված մարդ»³⁴: Պռոշյանն ունեւր նաև Միքայել Նալբանդյանի պաշտամունքը և խիստ ատելություն էր տածում Նալբանդյանի թշնամի Գաբրիել Այվազովսկու նկատմամբ, որին արհամարհանքով «եզվիտ» էր անվանում³⁵: Նա լեզվաշինության հարցերում ևս նախապատվությունը տալիս էր Նալբանդյանին և ոչ թե Ստեփանոս Նազարյանցին:

Պռոշյանը չէր ընդունում Գրիգոր Արծրունու նացիոնալիզմը. նա ազգերի եղբայրության ու համերաշխության իր ծրագիրն ունեւր³⁶:

Պռոշյանը հանդես է եկել նաև որպես լրագրող: Նրա հոդվածներում արծարծվում էին նույն խնդիրները, ինչ որ վեպերում. «Միշտ

³¹ Նույն տեղում, էջ VII-XI:

³² Ա. Տերտերյան, Նշվ. աշխ., էջ 148-149:

³³ Նույն տեղում, էջ 166:

³⁴ Նույն տեղում, էջ 170:

³⁵ Նույն տեղում, էջ 172:

³⁶ Նույն տեղում, էջ 175:

անցյալի մասին Պռոշյանը խոսում էր ներկայի համար, այսինքն թաղելով մեռելներին՝ հիշում էր ապրողներին»³⁷:

Թե՛ Պռոշյանն ընդունում էր Ալիշանին, ապա բոլորովին չէր ընդունում Արսեն Բագրատունուն, որի կեղծ կլասիցիզմն իր սրտով չէր³⁸:

Հայ թատրոնի նշանավոր գործիչ էր համարում Գաբրիել Սունդուկյանին՝ նրան անվանելով հայ ռեալիստական թատրոնի հիմնադիր³⁹: Ընդունում էր Ղազարոս Աղայանին, որը Պռոշյանին «համարում էր ժողովրդական գրականության «նորոգության առաքյալ», գովում է նրա հանդգնությունն ու համարձակությունը հնության դեմ կռվելու միջոցին»⁴⁰:

Մենագրության մեջ բնականաբար քննված են Պռոշյանի լեզվի ու ոճի խնդիրները: Իրոք, «հատուկ ձևով նկատված է Պռոշյանի վեպերի գլխացանկը, որ աչքի է ընկնում դարձյալ խոսուն վերնագրերով»⁴¹: Սակայն ոճական առումով Պռոշյանը թերաճում է վեպերում հանդիպող անհարկի կրկնություններով⁴²:

Պռոշյանն իր համար ստեղծել էր գրական կապեր, լինում էր Թիֆլիսի հայ մտավորականության շրջանում: Սկսնակ գրողի համար կարևոր էր նրա կապը բանագետ Գ. Տեր-Ալեքսանդրյանցի հետ, որը հրատարակել էր «Թիֆլիզեցոց մտավոր կյանքը» բանահյուսական նյութերի ժողովածուն⁴³:

«Գրական կապեր» բաժնում ուշագրավ է Ղազարոս Աղայանի՝ պատանի Պռոշյանին տրված գնահատականը. «Աղայանի կարծիքով հենց Ներսիսյան դպրոցում Պռոշյանն այնքան հսկայաքայլ առաջ էր

³⁷ Նույն տեղում, էջ 177:

³⁸ Նույն տեղում, էջ 179:

³⁹ Նույն տեղում, էջ 181:

⁴⁰ Նույն տեղում, էջ 184:

⁴¹ Նույն տեղում, էջ 200:

⁴² Նույն տեղում, էջ 203:

⁴³ Նույն տեղում, էջ 213:

գնացել, որ իր ուսուցիչներին «հարգելով հանդերձ»՝ իր մտքի ազատ թռիչքով ետ էր թողել իրանից»⁴⁴:

Գանանց հարցում Պոռոջյանը մի քայլ ավելի առաջ է գնացել ոչ միայն նրանց կրթության հարցում, այլև նրանց հասարակական դերի ու թատրոնի բեմի վրա տեսնելու խնդիրներում:

Խիստ ուշագրավ է մենագրության եզրափակիչ գլուխը՝ «Պոռոջյանը և այժմեականությունը»: Տերտերյանը Պոռոջյանին համարում է հայ գրականության հավերժական անուններից մեկը՝ իր թերություններով հանդերձ⁴⁵: Նրա տաղանդի հիմնական գիծը ցայտուն անկեղծությունն է, և գրականությունը նրա համար եղել է առաքելություն: Գրականագետը հատուկ շեշտում է նրա երկերի իմացական արժեքը:

Պոռոջյանի երկերում առատորեն սփռված են ժողովրդական բանահյուսության գոհարները, հայ ժողովրդի դարավոր կենսափորձից բխած եզրահանգումները: Ողջ «Պերճ Պոռոջյան» մենագրությունից պարզ երևում է Տերտերյանի մեծ սերը գրողի նկատմամբ:

Ս. Սարիկյանը Ա. Տերտերյանի մասին ջերմորեն գրում է. «Տերտերյանը լայն մտափորձունի գրականագետ էր, իր հետազոտություններում նա հայ գրականության երևույթները քննում է համաշխարհային գեղարվեստական փորձի ընդհանուր կոնտեքստում՝ ընդգծելով ոչ միայն հայրենի գրականության ազգային առանձնահատկությունները, այլև նրա աղերսները համաշխարհային գրականության զարգացման պրոցեսի հետ»⁴⁶:

Եզրակացություն

Արսեն Տերտերյանի «Պերճ Պոռոջյան» մենագրությունը գրականագետի վերջին աշխատությունն է, որը լույս է տեսել 1955 թ.՝ հետմահու: Այն շարադրված է XIX դարի հայ գրականության, նաև գրաքննադատության խոր իմացությամբ:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում, էջ 237:

⁴⁶ Ս. Սարիկյան, Արսեն Տերտերյան, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1982, թ. 4, էջ 35:

Աշխատությունը հավաստում է, թե պատմական առումով Պռոշյանն իր ստեղծագործությամբ հայ գրականության մեջ արձանագրել է առաջընթաց, և նա ունի իր պատվական տեղը հայ դասական գրողների պանթեոնում:

Տերտերյանի կարծիքով ոչ ոք այնպես ճշմարտացի չի պատկերել XIX դարի երկրորդ կեսի հայ գյուղն ու գյուղացուն, ինչպես Պռոշյանը: Գրականագետը վեր է հանել Պռոշյանի ստեղծագործությանը առնչվող բոլոր գրականագիտական հիմնահարցերը: Նա հիացած է գրողի մանկավարժական ու հասարակական գործունեությամբ:

Մենագրության մեջ հիմնավորված է Պռոշյանի՝ հասարակական տարբեր խավերի տիպեր կերտելու վարպետությունը: Տերտերյանը դիտարկել է նաև գրողի վեպերում եղած անհարկի կրկնությունները, անդրադարձել է մամուլում տպագրված հոդվածներին:

Պետք է խոստովանել, որ Տերտերյանի մոտ հաճախ կրկնվում են որոշ բառեր՝ դասակարգային պայքար, բուրժուազիա, շահագործում, դրական կերպար, բացասական կերպար ու օտարալեզու եզրույթներ, որոնց հայերեն համարժեքները լայնորեն գործածական են:

ման միտումների երկու կարգի ըմբռնում, մշակման երկու ուղղություն, որոնք պայմանականորեն նա կոչում է ժողովրդական-գրական և ընտրողական-գրական¹:

Առաջին ուղղության ներկայացուցիչները, հանդես գալով գրական լեզվի արհեստականության դեմ, զգալի տեղ էին տալիս ժողովրդախոսակցական լեզվի տարրերին: Այս ուղղության հետևողներից առաջինը Պերճ Պոռոջանն է, որի երկերում հաճախ հանդես են գալիս գրական լեզվից հնչյունական և քերականական շեղումներ՝ հոգուտ բարբառների: Նրա «Հացի խնդիր»-ն ունի խոսակցական-բարբառային երանգավորում: Հ. Թումանյանը, անդրադառնալով ժողովրդական բարբառներից օգտվելու խնդրին, գրել է. «Դա ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու»²:

«Հացի խնդիր» վեպի լեզվական շերտերը

Պ. Պոռոջանի «Հացի խնդիր» վեպն առաջին անգամ տպագրվել է «Փորձ» հանդեսում՝ 1879 թ.: Վեպում հեղինակն առատորեն օգտագործել է իր ուսուցչության տարիների հարուստ կենսավորված, իր հուշաշխարհում կուտակված հսկայական նյութը՝ կապված հայրենի Աշտարակի և տարբեր մարդկանց հետ: Վեպի կերպարների զգալի մասն ունեցել է իր նախատիպը:

Հայտնի է, որ Պ. Պոռոջանը խոր ակնածանք ուներ կրոնի նկատմամբ: «Հացի խնդիր» վեպում շատ են կրոնական ըմբռնումները: Գաղտնիք չէ, որ բառապաշարի կրոնակեղեցական բառաշերտը մյուս բառաշերտերի համեմատությամբ ավանդապահ է և կայուն:

Կրոն բառը ծագում է կիր (կրել) արմատից՝ օն մասնիկով³: Կրոն բառը, որ գրաբարում ուներ «կանոն, օրենք, սովորություն, պատվեր, բարեկարգություն, աղանդ, վարք, հավատք» իմաստները,

¹ Գ. Ջահուկյան, Էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, մաս 1, Երևան, 1980, էջ 33:

² Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 6, Երևան, 1994, էջ 201:

³ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 2, Երևան, 1973, էջ 685

ժամանակի ընթացքում կորցնում է իր իմաստներից մի քանիսը և հիմնականում ըմբռնվում է՝ որպես մարդու հավատը դեպի աստված: Վեպի լեզվում առանձին խումբ են կազմում կրոնական-պաշտամունքային անվանում հանդիսացող բառամիավորները, որոնք հատկանշվում են իմաստային-հասկացական և գործառության առանձնահատկություններով: Հին հայերենից սկսած՝ կրոն բառից կազմվել են տարբեր բարդություններ, այսպես՝ սրբակրոն - «սուրբ, մաքուր կրոն ունեցող, սրբակյաց» - մաքրակրոն - «մաքուր վարք ունեցող, մաքրակյաց» կուսակրոն - «ոչ ամուսնացյալ հոգևորական», այլակրոն - «ուրիշ կրոն, հավատ ունեցող», կրոնակից - «նույն կրոնը դավանող», կրոնագիտություն - «գիտություն կրոնների մասին», կրոնուսույց - «կրոն ուսուցանող» և այլն:

«Հացի խնդիր» վեպում հաճախադեպ է Աստված և սուրբ բառերի գործածությունը. «Ես ու իմ աստվածը, հալալ և Սաքոյի կերածը»⁴: «-Աստված օրհնեսցե, Մարգարե՛ր աղա» (15): «-Աստված ավելի բեթարիցը թափի» (44): «-Աստու հրամանովն ա,- պատասխանեց հայրս» (26): «Աստված քեզ երկար կյանք տա» (37): «Էն սրբ Գրիգորը վկա» (9): «Հայր սուրբն էլ մովրովի խաթեր էն սհաթն իր ձեռովը կպսակի» (10): Ակտիվ է ի սեր աստծու կառույցը. «-Ի՞նչ եք ասում, ի սեր աստծու, մի լավ կարդացեք» (21):

Բառապաշարային կաղապարները քննելիս նկատելի են աստված, խաչ, տուն բաղադրիչով բաղադրություններ՝ աստծասեր (12) «Խաչախապերն էլ հենց ինքն ա» (13): «Ամեն տեղ էլ նորափեսան ու խաչեղբայրը մի-մի գույգ գյուլբեք ստանում էին» (95): «Մովրովի ամարաթից ոչ պակաս կարևոր էր այս գինետունը» (27): «-Այ տնաքանդ, դու չե՞ս ամաչում» (76):

Կրոնակեղեցական այլ միավորներ՝ վարդապետ «հայ եկեղեցու կրոնական պաշտոնյա»- «-Ո՞վ, Թադևոս վարդապե՞տը» (21), տերտեր «քահանա, հոգևորական» -«Տերտե՛ր ջան, հիմի պսակը խափա-

⁴ Պ. Պոռշյան, Երկերի ժողովածու, հտ. 2, Երևան, 1962, էջ 8-10: Հաջորդիվ կնշենք նույն աղբյուրի համապատասխան էջը:

նում ես» (21), խաչակնքել «խաչի նշանով կնքել, օրհնել» - «Խաչակնքում եմ թե չէ, կողպեքն իրան-իրան բացվում ա» (50), պահպանիչ «հավատացյալներին օրհնելու կարճ աղոթք»- «Տերտե՛ր, փառոց կենաց, շուտ պահպանիչն ասա» (64), Զատիկ «եկեղեցական տոն» - «Ամենքը, միմյանց բարի գիշեր ասելով, ուրախ Զատիկ ցանկանալով, մտան յուրյանց յուրաքանչյուր հարկի տակ» (79):

Վեպում գործածական են գրաբարյան բառաձևեր՝ յուր, յուրյանց, կյուրակի, տղայք, երեխայք (64-65) և այլն: Նշելի է, որ վեպի բնագրում զուգահեռ գործածվում է երեխաներ հոգնակիի կազմությունը: Նկատելի է, որ 19-րդ դ. 60-ական թթ. սկսած՝ նույն բովանդակությունը լեզվական մի քանի ձևերով արտահայտելը սովորական երևույթ էր դարձել: Ստեղծվել էին լեզվական զուգաձևություններ, որոնցից անհրաժեշտ էր ընտրություն կատարել⁵:

Վեպում մեծ կշիռ ունեն բարբառային միավորները, այսպես՝ անջախ-հազիվ, բենքռատ-ծռատամ, ըռխին-բերան, երախ, իգիթ-քաջ, զիլան-գայլեր, շառ-գրպարտանք, ուզվոր-մուրացկան, յասավուլ-զավառական ոստիկանության ստորին պաշտոնյա և այլն:

Գործածության հաճախականություն ունեն ցի վերջածանցով կազմությունները. «Դրա համար մի քանիսն ասում են, թե քրդստանցի է, ոմանք էլ պնդում են, թե աշտարակցի է» (29):

Վեպում մեծ թիվ են կազմում դարձվածքները, որոնց զգալի մասը բարբառային ծագում ունի և պատկանում է լեզվի ժողովրդական-խոսակցական շերտին: Դարձվածային միավորները խոսքը դարձնում են ուժեղ և համոզիչ, գունագեղ և պատկերավոր: «Տուն ու տեղը քամուն տալ» (7), վեզս ալչու կաննել – գործս հաջողել (8), կրակ կտրել – ոգևորվել (12), հակալ-հակալ քցել-հալածել (13), գոգիք քարը վեր ածիր- մի անիր այդ բանը (14), ձվից դուրս չզալ-փոքր լինել (21):

Վեպն ունի գեղարվեստական վավերագրության տարրեր. հեղինակը հաճախ է օգտագործում հիշել բայի տարբեր ձևեր. «1840 թե

⁵ Ա. Գալստյան, Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն, Երևան, 2020, էջ 142:

50 թվականներին, լավ չեմ հիշում ժամանակը, միայն այսքանը գիտեմ, որ Հաշտարար աստյանները դուրս գալուց շատ առաջ էր» (7): Կամ՝ «Մենք վերը մոռացանք ասելու, որ քանի մի տարի հազիվ կար մովրովի կացարանը Սև ջրի գլուխը տեղափոխելը» (39):

Պոռոջանը հաճախ է ընթերցող միավորը գործածում որպես կոչական. «Դա Միկիտան Սաքոն է, ընթերցո՛ղ, որի հետ պատիվ կհամարիմ քեզ ծանոթացնել» (29):

Առաջադիր վեպում մեծ տեղ է տրված ժողովրդական բառ ու բանին, թևավոր խոսքերին, առած-ասացվածքներին, իմաստուն ասույթներին, աստվածաշնչյան խրատներին, որոնք առավել պատկերավոր են դարձնում խոսքը, ընդգծում ասելիքը: Ինչպես նշում է Ա. Ղանալանյանը, «ասույթների և աֆորիզմների ներթափանցումը ժողովրդական բառուբանի մեջ ստեղծագործական բարդ երևույթ է: Այն տեղի է ունենում ... միջնորդավոր զանազան օղակներով: Այդ երևույթը սերտորեն կապված է տվյալ ժողովրդի ապրած միջավայրի, նրա պատմական ճակատագրի, ուրիշ ժողովուրդների հետ ունեցած քաղաքական, մշակութային տարբեր հարաբերությունների հետ»⁶: Վեպում շատ են իմաստախոսություններն ու առածները, որոնց համար կարևոր աղբյուր են Աստվածաշունչը, անտիկ աշխարհի իմաստասերների ստեղծագործությունները, գեղարվեստական գրականությունը. «Ընտուր են ասել՝ աշխարհքս մի նարդիվան ա, մինը նի ա ըլնում, մինը վեր գալիս» (8): «Առաջնորդը ես եմ, բակլեն խաշած եմ ցանում» (14): «Խսմաթի ճամփեն կապիլ չեն» (15): «Ահի տարին ի՞նչ էիր, թե մահի տարին ի՞նչ ըլիս» (16): «- Ջան, դալամիդ ծերը պաչեմ, հրե լիզու ա, քջջան աղբյուր ա» (20): «Ընդուր են ասել՝ սուր լիզուն օձը ծակիցը կհանի» (20): «Ասում ա՝ աչքը բարձրանա՝ բարձրանա, ունքիցը վերն չի կարող գնալ» (22): «Թթու է՝ թան չի, ամեն մարդի բան չի» (32): «Ասում ա՝ էշը մատաղ չի ըլնիլ, իշագինը մատաղ կըլնի» (38): «Ասում ա՝ օձի սևին էլ նալաթ, սիպտակին էլ» (43): «Էս շունն էլ էն շանիցն,

⁶ Ա. Ղանալանյան, Ա., Հայկական առածների հնագույն գրավոր սկզբնաղբյուրները, «Բանբեր Մատենադարանի» Երևան, 1958, թ. 4, էջ 25:

երկունսն էլ մի տանիցը» (43): «Վա՛յ քեզ, քաղա՛ք, թագավորդ մանուկ և դառել» (74): «Ասում և՛ խերը տեսնի Հերապետը, ջառմեն քաջի Կարապետը» (75): «Աղջիկը որ կա, անկտրել ձմերուկ է», - ասում է առածը» (104): «Փոխը օխտը տուն և պահել» (132):

Համեմատությունը վեպի ամենատարածված արտահայտչամիջոցներից է: Դրանք հյուսվում են մի առարկան կամ երևույթը մյուսին նմանեցնելու, հավասարեցնելու հնարքով՝ գեղարվեստական խոսքի գեղագիտական արժեքը բարձրացնելու նպատակով: Համեմատություններում սովորաբար ընդգծվում է համեմատվող առարկաների համար ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա կատարվում է նրանց համադրումը. «Կրակի նման այրվում էր» (7): «Քրտինքի գոլորշին ամպի նման վրայիցը բարձրանում էր» (7): «Արշակը, մկան նման կուչ եկած, հետ քշեց յուր ձին» (73):

Վեպում կան նաև չափազանցության դրսևորումներ: Ամեն մի չափազանցություն նշանակում է «հնարավորի և իրականի սահմանի անցում»⁷: «Բերնիցս խոսք առավ թե չէ, թռավ դբա էջմիածին» (7):

Գեղարվեստական խոսքում հետաքրքիր դրսևորումներ կարող են արձանագրվել հատուկ անունների գործածության առումով: «Հացի խնդիր» վեպում դրանք հիմնականում անձնանուններ են և տեղանուններ: Հերոսների անհատականությունն սկսվում է նրանց բնակության վայրից, արտաքին նկարագրությունից: Հեղինակը, հերոսների համար օգտագործելով յուրահատուկ մակդիրներ և համեմատություններ, ստեղծում է նրանց դիմանկարը և ապա դրան համապատասխան բացահայտում նրանց ներքինը, որի հետ և կապվում են հերոսների վարքագիծը, հոգեբանությունը և հետագա գործողությունները, այսպես՝ աշտարակցի Խեչանենց Խեչան, սարի արջ Խեչոն, օգոստոսի աղվես քաչալ Ալին, հավագող Պետով (10) և այլն:

Հետաքրքիր գույներով է ներկայացվում Միկիտան Մաքոյի դիմանկարը. «Ասում են, որ ոչ մի գինեվաճառ չի կարողացել երկու-

⁷ Պ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2, Երևան, 11991, էջ 92:

երեք ամսից ավելի պահել Մաքոյին. մեր գուլում լակոտը մոր կոճակ կտրող է եղել, աչքի սուրմա թոցնող. ոչ միայն հաճախորդների գրպաններից անհայտացել են նրա օրովը զանազան մանր-մունր առարկաներ, գինեվաճառի ծոցից կամ գլխատակիցն էլ, գիշերը քնած ժամանակը, թոեւ վերցրել է նրա քսակը: Էլ ո՞վ էր գժվել Մաքոյի հետ երկար կյանք վարել» (29):

Գլխավոր հերոսը հաճախ է ներկայանում իր խոհերով. «-Էլի ապրեցիր, Միկիտան՝ Մաքո, քո բանն աջ ա, ով կուզի՝ թող հաչա,- ուրախ բացականչություններով գնում էր Մաքոն դեպի յուր գինետունը» (46):

Վեպի տեղանուններն օժտված են հարուստ բովանդակությամբ և տեղեկատվական լիցքով: Տրամաբանները կարևոր են համարում տեղանվան նշանակությունը բառիմաստից առանձնացնելը: Բ. Ռասելը հատուկ անունները համարում էր որոշակի առարկաներին վերաբերող թերի սիմվոլներ, որոնք վկայակոչում են ստանում նախադասության կազմում և հաղորդակցական գործառույթից դուրս առարկայական նշանակելի բովանդակություն չունեն⁸: «Մեր վերացած երիտասարդն այնպես թափ տվեց սանձն և կրկնեց դեպի Մոդնո թառը, որ ձին շունչը Պատաշարներումն առավ» (10):

Երբեմն ներկայացվում է ժողովրդական տեղանունը. «Էջմիածնից մոտ երեք ժամաչափ դեպի արևմտահյուսիս գտնվում է մի լիճ, որին ժողովուրդը Այդր անունն է տալիս» (23):

Վեպում հաճախ ներկայացվում են բանահյուսական գրույցներ, առասպելական պատմություններ: Հերոսի կողմից ներկայացվում է Ղաթթ առասպելական նժույգ ձին, որով Քրոտոլին քաջության անուն է ձեռք բերել (24):

Բանահյուսական մի գրույց է Արագածի կատարին գոյացած Այդր գյուղի պատմությունը:

⁸ Б. Рассел, Искусство мыслить, Москва, 1999, с 58:

Եզրակացություն

Այսպիսով՝ Պ. Պռոշյանը, լինելով Խ. Աբովյանի գործի առաջին հետևողը, «Հացի խնդիր» վեպում օգտագործեց աշխարհաբարի բառաձևերի ռճական բազմերանգությունը՝ ցույց տալով աշխարհաբարի կենսունակ տարրերի կիրառումը գեղարվեստական խոսքում:

Վեպի լեզվական շերտերը բազմազան են: Դրանք գրաբարյան և բարբառային տարրեր են, կրոնական-եկեղեցական միավորներ, Աստված և սուրբ բառերով բաղադրություններ, անձնանունների և տեղանունների հարահոս դրսևորումներ:

Վեպում մեծ տեղ է տրված ժողովրդական բառ ու բանին, թևավոր խոսքերին, դարձվածքներին, համեմատություններին:

«Հացի խնդիր» վեպը արժեքավոր ստեղծագործություն է նաև գրական արևելահայերենի գեղարվեստականացման առումով:



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մաշտոցի անվան Մատենադարանի
Ձեռագրագիտության բաժնի
ավագ գիտաշխատող,
Բանասիրական գիտությունների թեկնածու*

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ

«ԿՐԻՏԻԿԱ ՍՈՍ ԵՎ ՎԱՐԴԻԹԵՐԻ»

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԵՐԿԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

Գրականագիտության մեջ ընդունված կարծիք է, որ Միքայել Նալբանդյանը հայ գիտական¹ գրաքննադատության հիմնադիրն է: Ավելին, ակադեմիկոս Մ. Սարինյանը Նալբանդյանին է հատկացնում «հայ քննադատական ռեալիզմի» հիմադրի պատվավոր տեղը գրականության պատմության շրթայում և կարևորում. «Միք. Նալբանդյանն ըստ էության ստեղծում է քննադատության ազգային դպրոց՝ մշակելով նրա մեթոդի և մեթոդոլոգիայի ամբողջական տեսությունը»²:

Սույն հոդվածի քննության նյութը Մ. Նալբանդյանի գրաքննադատական մտքի պսակը համարվող «Կրիտիկա Սոս և Վարդի-

¹ Գրաքննադատական միտքը հայ իրականության մեջ տարբեր դրսևորումներ ունեցել է տակավին դասական մատենագրության սկզբնավորումից ի վեր (տե՛ս Ա. Դոլուխանյան, Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից, Երևան, 2009, էջ 69-74, հավելված՝ էջ 157-189):

² Մ. Սարինյան, Հայ գրականության երկու դարը, գիրք I, Երևան, 1988, էջ 87:

թերի» աշխատության արդիականությունն է³: Թվում է՝ նալբանդյանագիտության արձանագրած նվաճումների արդյունքում այս հարցն այլևս քննության կարիք չպետք է ունենար⁴, սակայն նշենք, որ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններն արտացոլվում են գրականության մեջ՝ շրթայաբար ազդելով նաև քննադատության վրա, որը փոխլրացնող կապի մեջ է գրականության հետ (քննադատության ուսումնասիրության առարկան կենդանի գրականությունն է): Այդ պատճառով գրաքննադատությունը ժամանակին բնորոշվել է որպես «շարժվող էսթետիկա»⁵:

Նկատենք նաև հետևյալը. «Քննադատության որևէ նոր տեսակի երևան գալով՝ հին ձևերը չեն դադարում գոյություն ունենալ, պարզապես հարստանում են քննադատության և՛ ոլորտները, և՛ միջոցները»⁶: Ասել կուզի՝ Մ. Նալբանդյանի գիտական որոնումների արդյունքում ամրագրված քննադատության մեթոդներն ու եղանակները ևս հարստանում են ըստ պահանջի: Ուստի մեր նպատակն է՝

ա. արժևորել Մ. Նալբանդյանի «Կրիտիկան» հայ գրաքննադատության արդի նվաճումների համատեքստում,

բ. հայտնաբերել այն կենսունակ հիմքը, որը Մ. Նալբանդյանի որոնումների արդյունքում ուղենշային եղավ հետագա շրջանի հայ գրաքննադատության համար:

³ Աշխատությանն անդրադարձել են Մ. Նալբանդյանի ստեղծագործության հարցերով զբաղվող գրեթե բոլոր ուսումնասիրողները (տե՛ս սույն հոդվածի ծանոթագրությունները), ուստի արդեն ասվածը շրջանառելն անիմաստ ենք համարում:

⁴ Էդ. Ջրբաշյան, Միքայել Նալբանդյանը և արդիականությունը, Երևան, 1984, էջ 13. «Նրանից են սկիզբ առնում շատ ճշմարիտ ըմբռումներ, որոնք մտան մեր գրականագիտության զինանոցը...»:

⁵ Վ. Բելինսկուն պատկանող այս բնորոշումը լայնորեն շրջանառվում է հայ գրաքննադատության պատմության տեսաբանների կողմից (տե՛ս Հայ քննադատության պատմություն, հտ. I, ընդհանուր խմբագրությամբ Մ. Սարինյանի, Երևան, 1985, էջ 7: Ժ. Քալանթարյան, Քննադատությունն իբրև գործնական գրականագիտություն, Երևան, 2017, էջ 59, 193:

⁶ Նույն տեղում, էջ 34-35:

Հարց է ծագում՝ Մ. Նալբանդյանի «Կրիտիկան» ունի՞ արդյոք ասելիք այսօր, երբ ավելի հաճախ են հնչում հումանիտար գիտությունների նահանջի մասին կարծիքներ⁷, և բարձրանում է գրաքննադատության կարևորության հարցը, երբ ապագա մասնագետը, ուսուցիչը կանգնած են ազգային արժեքների վերափոխման արժանիքները, ուսուցիչը կենտրոնացում պահանջող ճանապարհին: Վերջապես Մ. Նալբանդյանը, որ նպատակ ուներ գնահատել-արժևորել ո՛չ միայն իր ժամանակաշրջանի գրական գործընթացը, այլև «...Հայոց ազգի և սորանից հարյուր տարի հետո գալիք օրերը»⁸, կարողացել է արդյոք կանխորոշել ազգային գրականության ընթացքի օրինաչափությունները:

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է քննել «Կրիտիկայի» ձևի և բովանդակության փոխհարաբերության հարցն արդի քննադատության ըմբռնմամբ: 19-րդ դ. 50-60-ական թթ. գրաքննադատության սաղմնավորման շրջանն է, երբ այն տակավին տարբերակված չէ գրականագիտությունից, ուստի պատահական չէ, որ «Կրիտիկայի» ժանրային բնորոշման հարցում միասնական մոտեցում չկա, և հանդիպում է «հողված»⁹, «գրախոսություն»¹⁰, «քննություն»,

⁷ Ժ. Քալանթարյան, Նշվ. աշխ., էջ 70-72:

⁸ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով (այսուհետև՝ ԵԼԺ.), հտ. 3, Երևան, 1982, էջ 171:

⁹ «Տվի **գրվածքս** քննության», - գրում է Նալբանդյանը: Պարետի զեկուցագրի վրա պահպանված է 1864 թ.. գրություն. «Այդ **հողվածը** պետք է թողնել III բաժանմունքի գործերում՝ մինչև Նալբանդովի դատավարության ավարտը» (տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հտ. 4., Քննադատություն և հրապարակախոսություն, Երևան, 1983, (հղումներն այս հատորից՝ շարադրանքի մեջ՝ փակագծերում), էջ 474-475: «Կրիտիկայի» **հողված** բնորոշման և ծավալի անհամապատասխանությունը նկատել է Ա. Դոլուխանյանը (տե՛ս Ա. Դոլուխանյան, Նշվ. աշխ., էջ 69):

¹⁰ Ս. Մարինյան. «**Հողվածը** շատ է հեռանում սովորական **գրախոսության** շրջանակներից և կրում է ընդհանրացնող, **տեսական աշխատության** բնույթ» (Հայ քննադատության պատմություն, էջ 166: ԵԼԺ, հտ. 4, էջ 474-476):

«ուումնասիրություն», «մեծ քննադատություն»¹¹ բնորոշումներով:

Ինչո՞վ բացատրել բնորոշումների այսօրինակ բազմազանությունը: 19-րդ դարասկզբին պարբերական մամուլն էր գերազանցապես գրաքննադատության դրսևորման դաշտը, որի պատճառով վերջինս ստանում է հրապարակախոսական շունչ, նրա՛ն էր վերապահված հասարակությանն արթնացնելու, լուսավորելու, գեղագիտական ճաշակ ուղղորդելու, ինչպես նաև գրականության ապագան կանխորոշելու դերը: Բացառություն չէր «Կրիտիկան», որը նույնպես գրված էր «Հյուսիսափայլ» ամսագրում հրատարակելու նպատակով: «Դժվար է ասել,- գրում է Ս. Սարինյանը,- Նալբանդյանը գրականագիտություն է անում, թե քննադատություն: Ավելի ճիշտ կլինի ասել՝ և՛ մեկը, և՛ մյուսը: Այդ շրջանի քննադատությունը հագեցած էր հրապարակախոսությամբ, սոցիոլոգիայով և իր էությամբ վերլուծական գիտություն էր ու ազդեցիկ դեր ուներ հասարակական մտքի պատմության մեջ»¹²: Այդ է պատճառը, որ Պ. Պռոշյանի «Մոս և Վարդիթեր» վեպին զուգահեռ Նալբանդյանը քննության նյութ է դարձնում նաև հայ գրականության ընդհանուր պատկերը: Չէ՞ որ քննադատին էր վերապահված՝ որոշելու՝ «ի՞նչ է արդեն արել գրականությունը և դեռևս ի՞նչ պետք է «սպասել նրանից. ապագայի ի՞նչ երաշխիքներ է ներկայացնում նա և

¹¹ Ռ. Բերբերեան, Գամառ Քաթիպա (Նրա կեանքը եւ ապրումները), Եօթերորդ գլուխ, «Հայրենիք», Բոստոն, 1932, թ. 12, Հոկտեմբեր, էջ 132. «Մենք լայն մտքով... գրական քննադատութիւն չունինք (եթէ չհաշուենք քսանեւիինգ տարի առաջ Ս. Նալբանդեանցի գրած մէկ *մեծ քննադատութիւնը* «Մոս եւ Վարդիթեր» վեպի մասին): Կարդացել է արդեօք ձեզնից որեւէ մէկը իմ բանաստեղծութիւնների մասին մի լուրջ քննադատութիւն: Ես երբեք չհասկացայ՝ արդեօք հայ քննադատը անընդունակ է քննութեան ենթարկել իմ գրական աշխատանքները, թէ՛ սոքա քննութեան արժանի բաներ չէն», - երիտասարդ գրողների հետ հանդիման ժամանակ խոստովանում է Ռ. Պատկանյանը: «Մեծ» բնորոշումն այստեղ կարելի է հասկանալ երկու՝ ծավալով մեծ և բովանդակությամբ հարուստ իմաստներով:

¹² Ս. Սարինյան, Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, 1979, էջ 13:

դեռևս ի՞նչ է պակասում նրան»¹³: Այս հարցադրումները համահունչ են ժամանակակից գրաքննադատությանը ներկայացվող պահանջներին. «Քննադատի խնդիրը ոչ միայն այս կամ այն գրողին կամ այս կամ այն երկր բնորոշելն է կամ գնահատելը (առանց դատավոր լինելու հավակնության), այլև գրականության ընթացքի համակարգված վերլուծությունն ու օրինաչափությունների հայտնաբերումը»¹⁴:

Ժամանակակից գրաքննադատությունն այսօր ներկայանում է որոշակիորեն ձևավորված համակարգով ¹⁵ . 19-րդ դարասկզբին ուրվագծվող սկզբունքներին ավելացել են մեթոդներ և ժանրեր՝ հարստացնելով գրաքննադատության «զինանոցը»: «Կրիտիկայի» այժմեականությունը գնահատելու համար՝ անհրաժեշտ է պարզել, թե արդի գրաքննադատության ժանրերից և մեթոդներից որ(ոնք) են արդեն կիրառված «Կրիտիկայում»՝ այդպես էլ հիմնավորելով ժառանգականությունը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձևաբովանդակային հատկանիշներով «Կրիտիկան» ծավալի և դիտարկված հարցերի բազմազանությամբ և ընդհանրացնող բնույթով մոտ է տեսական հողվածին, սակայն ունի գրախոսականին բնորոշ ակնհայտ առանձնահատկություններ: Քննադատության մեջ տեսական հողվածի և գրախոսության արդի բնորոշումները հետևյալն են.

Գրախոսություն - «Լինելով առաջին արձագանք (ընգծումը մերն է – Լ. Ն.) ստեղծագործության մասին՝ գրախոսությունն ընթերցողին գաղափար է տալիս թեմայի, պլոժեի, կառուցվածքի, արձարձած հարցերի մասին և գրականության ընթացքի ու հենց նույն գրողի այլ ստեղծագործությունների համեմատությամբ արժևորում այդ ստեղծագործությունները... Ժամանակակից քննադատական մեթոդները ուղղորդում են դեպի մեկնաբանություն և ոչ գնահատում, բայց արժանահավատ մեկնությունը իր մեջ անպայման վերաբերմունք է պարու-

¹³ Հայ քննադատության պատմություն, էջ 166:

¹⁴ Ժ. Քալանթարյան, Նշվ. աշխ., էջ 70:

¹⁵ Ս. Սարինյան, Գրականագիտական մեթոդներ, «ՎԷՄ», Երևան, 2017, թ. 1, Հունվար-Մարտ, 2017, էջ 9-27:

նակում»¹⁶: Այստեղ քննադատը դիտարկում է հետևյալ հարցերը. ա) գրախոսվող նյութ, բ) նյութի արդիականություն, ներկայացման արվեստ՝ նրա առաջացրած հետաքրքրությամբ, գ) գրողի գրական դավանանք, նրա գրական ուղղություն, դ) քննադատի մեթոդ¹⁷:

Տեսական հոդված - «Տեսական հոդվածում հեղինակը զուգադրում է գրական փաստերը, հայտնաբերում է օրինաչափությունները, բարձրանում է տեղեկատվական ու նկարագրական մակարդակից, անում է հետևություններ, հայտնում տեսակետներ, որոնք հիմնված են գրական փորձի վերլուծության վրա»¹⁸:

«Կրիտիկան» գրախոսություն ենք համարում, քանի որ այն Պ. Պռոշյանի «Սուս և Վարդիթեր» վեպի մասին քննադատական առաջին արձագանքն է: Պ. Պռոշյանն իմացել է, որ իր վեպի մասին Մ. Նալբանդյանի տակավին անտիպ հոդվածը Քերովբե Պատկանյանի մոտ է, և 1875-1876 թթ. նամակներով դիմել է Ռ. Պատկանյանին՝ խնդրելով չտպագրելու դեպքում իրեն փոխանցել «գոնե պատճենը» (էջ 475)¹⁹, սակայն անարդյունք: 1889 թ. Պ. Պռոշյանը Մ. Նալբանդյանի գրախոսությունը կարդալու մտահոգությամբ «Հանդէս գրականական և պատմականի» խմբագիր Մ. Բարխուդարյանին գրում է հետևյալը. «[Հոդվածը] տպված ոչ մի տեղ չկա: Ափսո՛ս է, իհարկե, որ թերի է, բայց և այնպես ցանկալի է հանգուցյալ Նալբանդյանցի կարծիքն իմանալ իմ անդրանիկ գրվածքիս վրա. տպեցե՛ք ուրեմն, խնդրում եմ, թեկուզ պակաս-պոռատ» (էջ 476)²⁰:

¹⁶ Ժ. Քալանթարյան, Նշվ. աշխ., էջ 179, 186:

¹⁷ Նույն տեղում, էջ 184:

¹⁸ Նույն տեղում, էջ 193:

¹⁹ Հոդվածը հրատարակվել է համառոտ (տե՛ս «Հանդէս գրականական և պատմական», Մոսկուա, 1890, գիրք 3) և ընդարձակ (տե՛ս Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, խմբ. և կոմենտարները՝ Ա. Հովհաննիսյանի, Երևան-Մոսկվա, 1935, էջ 631-673) տարբերակներով:

²⁰ Պ. Պռոշյանի վեպը միակը չէր, որի մասին առաջին անգամ արձագանքում է Մ. Նալբանդյանը: Ընթերցող հասարակությունն «Ազապի» վեպի և այն թարգմանելու անհրաժեշտության մասին առաջին անգամ իմացավ «Կրիտիկայից», որին հաջորդեց վեպի թարգմանությունը:

Զուգահեռ ենք արդի և նալբանդյանական ըմբռնումներն ըստ գրաքննադատական ժանրերի.

Գրախոսության կառուցվածքն ըստ արդի գրաքննադատության պահանջների	«Կրիտիկա Մոս եվ Վարդիթերի»
ա) Գրախոսվող նյութ	«Մոս և Վարդիթեր» վեպ. «Մեր անաչառ քննությունը բնավ չպիտի նսեմացնի նորա արժեքի և քանքարի փայլը... համոզված ենք... որ մեր անկեղծ և արդարադատ, թեև խիստ և անկաշառ քննությունը, եթե համբուրելի հեղինակին օգուտ չբերե, վնաս ոչ երբեք» (էջ 172):
բ) Նյութի արդիականություն, ներկայացման արվեստ՝ նրա առաջացրած հետաքրքրությամբ	«Այն մի շատ բնական գործ է», «բանաստեղծը խոսում է բնության լեզվով... իսկ ուր մեկ վայրկյան անգամ... օգնություն է խնդրում երևակայությունից և հնարաստեղծում է անբնական բաներ, այստեղ գործի արժեքը թուլանում է» (էջ 173): Վեպն արտացոլում է ազգային կյանքը և բխում է կյանքից . սա է նորույթը:
գ) Գրողի գրական դավանանք, նրա գրական ուղղություն	«Արգո հեղինակն իր նկարագրած կյանքի հանդեպ մի անխարդախ հայելի է, ուր ցոլանում են բնության ճառագայթքը» (էջ 172): «Մենք մեր կողմից շնորհակալություն ենք հայտնում արգո հեղինակին, որ բացում է ազգի այս տեսակ բարոյական խոցերը, որ ծածկված մնալով ոչ միայն կարող են փտիլ, այլև իրենց վարակիչ

	որակությամբ կորստաբեր լինել» (էջ 172): Այդ ուղղությունը Նալբանդյանը համարում էր «սկեպտիցիզմ»:
դ) Քննադատի մեթոդ	«Հույս ունինք, որ ոչինչ չկարողանա դավաճանել ճշմարտության: Մեր հատվածը նույնպես շպար չունի, ինչպես մեր քննության առարկան՝ «Սոս և Վարդիթերը» (էջ 173):

Տեսական հոդվածի կառուցվածքն ըստ արդի գրաքննադատության պահանջների	«Կրիտիկա Սոս եվ Վարդիթերի»
ա) Գրական փաստերի գուգադրում բ) Օրինաչափությունների հայտնաբերում	Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» և Պ. Պոռշյանի «Սոս և Վարդիթեր» վեպերը դիտարկվում են որպես ազգային վիպասանության հիմք: Գարբիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» երկն իր քննադատական ոգով համեմատում է Գոգոլի «Մեռած հոգիների» հետ (էջ 170): Ղ. Ալիշանի քնաբերությունն «ախոյան չունի» ազգային ոգու դրսևորման առումով (էջ 170):
գ) Տեղեկատվական և նկարագրական մակարդակից անցում ընդհանրացումների	Այս հարցը Մ. Նալբանդյանի «Կրիտիկայում» արտահայտված է տողատակի ծավալուն ծանոթագրություններով. ամեն առանձին գրական փաստ դիտարկում է տարբեր հարթություններում՝ իր ժամանակի համաշխարհային գիտական գրականությունից արված հղումներով: Ըստ անհրաժեշտության ընթերցողների համար կարևորում է այդ աղբ-

	յուրներին թարգմանաբար ծանոթանալու խնդիրը:
դ) Հետևություններ և տեսակետներ՝ հիմնված գրական փորձի վերլուծության վրա	«Մոս և Վարդիթերը» վերլուծվում է հետևյալ կարգով. ազգային դպրության մեջ այս վեպի ընդհանրական արժևորում (համեմատություն այլ գործերի հետ), թերությունների վերհանում, առավելությունների ընդգծում, ընդհանրացումներ (այս մասին՝ ստորև):

Վերոբերյալ օրինակները ցույց են տալիս, որ Մ. Նալբանդյանը, հրաշալիորեն համակարգելով նոր ձևավորվող եվրոպական և ռուսական գրականագիտական փորձը, կարողանում է մշակել իր ժամանակի համար մրցունակ և հայ գրական ընթացքին լիցք հաղորդող կոնկրետ ժանր, որն ինքը կոչում է «Կրիտիկա»։ այսօրյա ընկալմամբ դա գրախոսությունն է՝ տեսական հողվածի ընդհանրացումներով հագեցած:

Արդյո՞ք արդիական են այն դրույթները, որոնք կարևորել և որոնցով առաջնորդվել է Մ. Նալբանդյանը - այս հարցը մեկնաբանելու համար բանալի կարող է դառնալ Ա. Տերտերյանի՝ Մ. Նալբանդյանին տրված բնորոշումը. «Նա հրապարակախօս է, որովհետեւ ազգասեր է: Ազգասեր է, որովհետեւ ազատամիտ է»²¹: Այո՛, Մ. Նալբանդյանի գրաքննադատության կարևորագույն հատկանիշը ազգի առաջընթացի ուղիների որոնման մեջ է. «Ամեն բանից առաջ քննելիքը է ազգի կյանքը, որովհետև այդ կյանքն է բանաստեղծի հիմքը, որի վրա կառուցանում է նա յուր շինվածքը: Հայտնի է, թե ազգն էլ մեղավոր չէ, եթե նորա կյանքը չէ երևեցնում այսօր այնպիսի բնավորությունը և երևույթը, որ չկան և «Մոս և Վարդիթերի» մեջ: Նոցա աճելության համար հարկավոր է հող, հարկավոր են պայմաններ և հնարներ,

²¹ Ա. Տերտերյան, Միքայել Նալբանդեան ազգութեան հրապարակախօսը, Ալեքսանդրապօլ, 1910, էջ 6:

որոնցից գուրկ ենք այսօր և որոնց թերությունը գուցե թե լցնե լուսավորությունը մի մասով, եթե գիտությունը մտնե Հայաստան» (էջ 225): Այս հայացքով է նա քննում գրականությունը, և այս գնահատականը արդիական է առ այսօր:

Մարդկությունը ներկայումս կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ. տեխնիկական աննախընթաց վերելքը շատ դրական կողմերով բերում է նաև մտահոգիչ հարցեր. ինֆորմացիայի փոխանցման արագությունը, հասանելիությունը թույլ են տալիս մի կողմից ավելի լայն հարթության և համեմատությունների մեջ տեսնել ու քննել գրական գործընթացը, սակայն գիտելիքին փոխարինելու է գալիս ինֆորմացիան, գրքի (գրականության) նկատմամբ վերաբերմունքը փոխվում է, վերախմաստավորվում են աշխարհակործան պատերազմների արդյունքում սրված ազգային խնդիրները, մարդկային արժեքները: Այս երևույթների ազդեցության արդյունքում գրականության ազգային չափանիշը նորանոր երանգավորումներ է ստանում. «Ճշմարիտը ազգային չափանիշն (ընդգծումը մերն է՝ - Լ. Ն.), է և յուրաքանչյուր ազգային գրականություն ունի արժեքայնության իր չափանիշը: «Ազգային չափանիշը» տեղական-ներազգային հասկացություն չէ, այլ գեղագիտական ու պատմական կատեգորիա... համաշխարհային չափանիշի ձևությամբ,- գրաքննադատության ազգային չափանիշի մասին ընդհանրացնում է Մ. Մարինյանը՝ արձագանքելով Մ. Նալբանդյանի տեսական հայացքներին²²:

Փայլուն կերպով տիրապետելով համաշխարհային հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի պատկերին և օրինաչափություններին, լինելով բազմակողմանի զարգացած ուսումնասիրող, Մ. Նալբանդյանը «ծառայեցրել» է համաշխարհային փորձը ազգային

²² Մ. Մարինյան, Հայ գրականագիտության անցյալը և ներկան, «Վեմ», Երևան, 2009, թ. 2, Հուլիս-Սեպտեմբեր, 2017, էջ 11-29:

խնդիրների լուծմանը²³, սա է մեր կարծիքով Մ. Նալբանդյանի գրաքննադատության ամենակարևոր առանձնահատկությունը. չէ՞ որ ազգային հիշողությունն ու գիտակցությունը պահպանած փոքր ժողովուրդների համար գրականության ազգային խնդիրը նախ և առաջ գոյաբանական է: Ուստի պարզ է, որ Պ. Պոռոշյանի թույլ վեպը Նալբանդյանի քննադատական գրչի տակ դարձավ հայ ժողովրդի կենսական հարցերին պատասխանելու հնարավորություն: Մ. Նալբանդյանը քննական նյութը պայմանականորեն բաժանում է հատվածների (ներածություն, թերությունների վերհանում, առավելությունների շեշտադրում և ամփոփում (էջ 220) և և իր իսկ խոստովանությամբ հաճախ նյութի ծավալը գերազանցելով՝ վերլուծում²⁴ .

1. Ներածության արժեք ունեցող ընդհանուր տեսություն՝ կարևորելով վեպի միջոցով ազգային կյանքի ճշմարտացի կողմերի բացահայտումը և ազգի առաջընթացի հնարավորությունը (սա հեղինակի համառոտ գնահատականն է՝ տրված Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի», Պ. Պոռոշյանի «Մոս և Վարդիթեր», Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր Մարգիս» և «Ագապի» վեպերին և Ղ. Ալիշանի բանաստեղծություններին՝ որպես ազգային վիպերգություն և ազգային բանաստեղծություն),

2. Վեպի թերությունների վերհանում. սա գրախոսության մեծածավալ հատվածն է և ընդգրկում է հետևյալ բաժինները.

ա. Վեպի հյուսվածքի քննություն (սյուժեի զարգացման ոչ միօրինակ ընթացք, անհիմն ընդմիջարկումներ),

²³ Արդի գրաքննադատության տեսնակյունից խնդիրն առկա է նաև այսօր. «Անկասակած է համաշխարհային գրականության մտքի նվաճումների յուրացման անհրաժեշտությունը ազգային գրականագիտության և քննադատության առաջընթացի տեսակետից: Մակայն անվերապահ հիացումը և անքննադատ յուրացումը ազգային մտածողությունը դնում են կախյալ վիճակի մեջ». Ս. Սարինյան, Նույն տեղում:

²⁴ Այստեղ կներկայացնենք միայն հեղինակի դիտարկած թեմաները, քանի որ «Կրիտիկան» մանրամասնորեն վերլուծված է (տե՛ս Ա. Դոլուխանյան, Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից, էջ 69-74):

բ. Կերպարներ (կերպարների անհամոզիչ զարգացումներ, գրողի կոպիտ միջամտություններ),

գ. Լեզվի խնդիր (նոր գրական լեզվի, բարբառների, ժողովրդական լեզվի արժևորում և քննություն):

3. Առավելությունների վերհանում.

ա. Հասարակաց կյանքի ճշմարտացի պատկեր,

բ. Բնության նկարագրություն («Գործի սկզբից մինչև վերջը բնության նկարագրությունը... Սարերը, դաշտերը, այգիքը, տարու եղանակները, նոցա ազդեցությունքը լեզու են առել հեղինակի գրչի տակ»),

գ. Անուշի կենդանի կերպարը,

դ. Մասսայական տեսարաններ (Ծաղկագարդի կիրակին),

ե. Կենդանի երկխոսություններ (Վարդիթերի հոր և մոր խոսակցությունները «այն աստիճանի գեղեցկություն ունին, որ մենք չենք կարող մեր խոսքերով բացատրել»),

զ. Հասարակության բարոյահոգեբանական պատկեր («Հեղինակը չէ մոռանում տեղ-տեղ նոցա բարոյական խոցերն էլ բանալ, չէ մոռանում խարազանել բարոյականությունը»),

է. Սոցիալական վիճակի պատկերը,

ը. Ժողովրդական լեզվի ճաշակավոր կիրառություն (առած-ասացվածքների բնական կիրառում, ժողովրդական բանահյուսության գողտրիկ նմուշների շրջանառություն):

Այս «բազմաճյուղ» քննությունը ցույց է տալիս, թե հայ գրականության համակարգված գրաքննադատության անդրանիկ հետազոտությունն ինչ ուղղությամբ է զարգացրել հեղինակը, իսկ գրաքննադատության հետնալրբանդանական ընթացքը վկայում է, որ հեղինակի վերոբերյալ մոտեցումներն ու քննարկվող հարցերի շրջանակը ուղղակի կամ անուղղակի ներկա են հայ քննադատական մտքի ամենատարբեր դրսևորումների մեջ: Հեղինակն առանց անվանելու քննում է գրականագիտական այնպիսի իրողություններ, ինչպիսիք են՝ բնական և տիպական կերպար, սյուժեի զարգացման ընթացք, կերպարներ-

րի և հանգամանքների կերտման եղանակ, գլխավոր և երկրորդական կերպարներ ու վեպի կոմոպոզիցիոն խնդիր, կերպարների սոցիալ-հոգեբանական վերլուծություն և այլն. բնորոշումներ, որոնք տասնամյակներ հետո միայն գիտականորեն հիմնավորվեցին որպես գրականագիտական եզրույթներ²⁵:

Եթե Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» հայ նոր գրականության գրական հուշարձանն է, ապա Մ. Նալբանդյանի «Կրիտիկան» կարելի է համարել հայ նոր գրականության տեսական սկիզբ: Ամեննին պատահական չէ, որ թե՛ Աբովյանի, թե՛ Նալբանդյանի սխրանքները մի խորհրդավոր ձևով հայ գրականության համար օրհասական պահին ուղղորդել են հայ գրականության հանճարներին՝ Հ. Թումանյանին և Եղ. Չարենցին:

Խիզախ և ինքնագոհ մտավորականի ահագանգը խտացված է «Կրիտիկայի» բնաբանի մեջ. «Ով ննջում է, մի՞ թե այլևս հարություն չի՞ առնի» (Մաղմ. Խ. 9): Այս հարցի պատասխանը տալիս է հեղինակը. եթե ազգի սոցիալ-քաղաքական վիճակի, կրթության, լեզվի իրար փոխկապակցված խնդիրները լուծվեն, ապա ննջողը, այսինքն՝ ժողովուրդը, անպայման հարություն կառնի, վկան՝ հետնալբանդյանական մեզ ավանդված բազմաճյուղ և յուրօրինակ հայ գրական գործընթացն է, որն իր հետ բերում է արդեն նոր մարտահրավերներ:

²⁵ Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Բանարվեստի պատմություն, Երևան, 2011, 415 էջ:



ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«ՍՈՍ ԵՎ ՎԱՐԴԻԹԵՐ» ՎԵՊՈՒՄ.

ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՐՇԵՔԸ

Ներածություն

Պերճ Պոռոջանն իր անդրանիկ վեպը՝ «Սոս և Վարդիթեր», գրել է երիտասարդ հասակում՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գորավոր ազդեցությամբ ներշնչված: Այդ մասին գրողը խոստովանել է բազմիցս: Գրականագետները, թե՛ անցյալում և թե՛ մեր օրերում, Պոռոջանին համարել են Խ. Աբովյանի առաջին հետևորդը: «Աբովյանի առաջին աշակերտը եղավ Պոռոջանը, որը գրական ասպարեզում համեստ գործունեություն ունեցավ»¹: Այս գնահատականը տրվել է գրողի մահվանից անմիջապես հետո:

Պոռոջանը վեպը նվիրել է իր հայրենի Աշտարակի բնակիչներին: Վեպի սկզբում զետեղել է չափածո ընծայական, որն ունի հետևյալ վերնագիրը.

*«Ընտիր աշտարակեցի՛ք,
Իմ քաղցր հայրենակի՛ցք»:*

¹ Ա. Տեր-Յարութիւնեան, Պոռոջան եւ նրա գրական գործունեութեան արժէքը, Նոր-Նախիջեւան, 1908, էջ 14:

Այն ավարտվում է հետևյալ քառատողով.

*Ձեզ եմ նվիրում ուրեմն այս գիրքը,
Ջահել հասակիս ջահել արդյունքը.
Դե՛հ, ընթերցե՛ք սիրով, հաճությամբ
Պերճի Պռոշյանց փոքրիկ նվերքը²:*

«Սոս և Վարդիթեր» վեպի առաջին քննադատը եղել է մեծ հանրագիտակ Մ. Նալբանդյանը, որն ուներ Խ. Աբովյանի պաշտամունքը: Իր աշխատությունը Նալբանդյանը վերնագրել է. «Կրիտիկա Սոս և Վարդիթեր», Ազգային վիպասանություն, պ. Պերճի Պռոշյանց, 1860, Թիֆլիս³: Հետաքրքիր ճակատագիր է ունցել հայ գրաքննադատական մտքի այդ կարևորագույն աշխատությունը: Այն գրվել է Նալբանդյանի՝ Պետրոպավլովյան ամրոցում բանտարկված ժամանակ, երբ 1864 թ. փետրվարի 11-ին Դուգորուկովի հանձնարարությամբ բերդի պարետին հայտնում են, թե Նալբանդյանը կարող է զբաղվել գրական գործերով, սակայն նրա գրվածքները պետք է գրաքննություն անցնեն նորին կայսերական մեծության III բաժանմունքով: Սակայն ցարական քննադատությունն արգելում է այդ ծավալուն հոդվածի հրապարակումը: Հոդվածը հայտնաբերել է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը և առաջին անգամ տպագրվել է 1935 թ.՝ Երևանում, իր ծանոթագրություններով⁴:

Իր գրաքննադատական գնահատականներում Նալբանդյանը եզրակացնում է, թե հեղինակի գլխավոր գաղափարը Սոս և Վարդիթերը չէ, այլ ընդհանուրի կյանքը, ծեսերը, սովորույթները, ավանդությունները, իսկ Սոս և Վարդիթեր կերպարներն առնված են որպես օգնական: «Սոս և Վարդիթեր մենք չենք կարող ընդունել որպես մի սիրապատում վիպասանություն»⁵:

² Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հտ. 1, Երևան, 1953, էջ 9:

³ Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 4, Երևան, 1983:

⁴ Նույն տեղում, էջ 474-475:

⁵ Նույն տեղում, էջ 174:

Հետաքրքիր է Նալբանդյանի մոտեցումը Պռոշյանի վեպի այն հատվածներին, որոնք կապվում են հայ ժողովրդական բանահյուսության հետ:

Հետագայում գրեթե բոլոր գրականագետները ուշադրություն են դարձրել Նալբանդյանի այս ելակետային դրույթին, իսկ նշանավոր բանագետ Ա. Ղանալանյանը հատուկ և մեծարժեք աշխատություն է նվիրել այդ խնդրին: Գրքի շատ համառոտ առաջաբանում բանագետը փաստել է, թե Պռոշյանի գրվածքներում եղած բանահյուսական նյութերը չեն դարձել հատուկ ուսումնասիրության առարկա. «Ներկա աշխատությունը, որը բաղկացած է երկու առանձին մասերից, նպատակ ունի՝ ա) տալու Պռոշյանի օգտագործած ֆոլկլորային նյութերի վերլուծությունը (ներածություն) և բ) ի մի հավաքելու մեր հեղինակի գրվածքներում ցրված՝ հին Աշտարակի ժողովրդական ստեղծագործության նմուշները (բնագիր)»⁶:

Մեր աշխատանքում առանձնացրել ենք այն բանահյուսական ժանրերը, որոնք օգտագործել է Պռոշյանը «Սոս և Վարդիթեր» վեպում:

«Սոս և Վարդիթեր» վեպում օգտագործված բանահյուսական ժանրերը

«Սոս և Վարդիթեր» վեպին կցված առաջաբանից պարզ է դառնում, որ գրողը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում սովորելիս կարդացել է V դարի հայ պատմագրության գլուխգործոցները, որոնցում առկա են հնագույն բանահյուսական կտորներ: Դրանք առկա են՝ Ագաթանգեղոսի, և՛ Խորենացու, և՛ Բուզանդի, և՛ Եղիշեի ու Ղազար Փարպեցու մոտ:

Պռոշյանը վեպին կցված իր առաջաբանում այդ իրողությունը շեշտում է Խորենացու ու Եղիշեի երկերից բերված հատվածներով. «Մեր շատահանձար Խորենացին ինքն իսկ շարժված է եղել այս երկու գլխավոր ճյուղերու (խոսքը հոգևոր և աշխարհիկ ճյուղերի մասին է –

⁶ Ա. Ղանալանյան, Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1938, էջ 3:

Ռ. Դ.) ազդեցությամբ: Պատմելով Վահագնի դյուցազնական քաջագործությունքը, ախորժանոք նվազ է հնչեցնում հասարակ ժողովրդյան հետ նրա բամբիռը՝ հիանալով երգում է յուր դյուցազնի վրա հորինած երգը»⁷: Հետո խոսում է Վարդգես երիտասարդի՝ Երվանդ արքայից աղջիկ ուզելու մասին, ինչպես նաև Արտաշես արքայի ու Մաթենիկի ամուսնության վիպական հատվածների մասին: Հիշում է նաև Եղիշեի պատմությունն ամփոփող Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց ներբողող հատվածը: Նա ներկայացնում է այդ կանանց սովորությունները, նրանց հացարարներին, ձեռքերի անուշահոտ օձառները, սկուտեղները, նրանց ապարանքները, ծաղկանոցները, զարդարանքները, շքեղ հագուստները և այլ սովորությունները⁸:

Ժողովրդական բանահյուսության դրսևորումները եղել են ողջ միջնադարում՝ նայած հեղինակի նախասիրության: Խորենացին չի էլ թաքցնում, թե ինքն օգտագործել է ժողովրդական բանահյուսությունը, իսկ Բուզանդը հայ-պարսկական պատերազմները ներկայացրել է բանահյուսությանը հատուկ հիպերբոլիկ պատկերներով: Նրա պատմության չորրորդ դպրության ԻԲ. գլխում նկարագրվել է հայ-պարսկական պատերազմի մի դրվագը: «Պարսից Շապուհ թագավորը ժողովեց իր զորքը անթիվ ու անհամար բազմությամբ, ինչպես ավազը ծովի ափին, և բազմաթիվ փղեր, որոնց թիվ չկար»⁹: Ահա այս անթիվ-անհամար զորքին հայոց զորքը կոտորել է մինչև վերջին զինվորը, բացի Բագոս հրամանատարից՝ չտալով որևէ կորուստ. «Ապա Արշակ թագավորը գիշերով հարձակվում էր պարսից բանակի վրա, բոլորին սրի էր անց կացնում. հազիվ Շապուհ թագավորը միայն մեկ ձիով ճողպարում էր, փախչում Պարսից աշխարհն ընկնում»¹⁰:

Նալբանդյանը «Սոս և Վարդիթեր» վեպի քննադատության մեջ նկատել է չափազանցված տեսարաններ, որոնք հատուկ են ժողովր-

⁷ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հտ. 1, էջ 13:

⁸ Նույն տեղում, էջ 14:

⁹ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթագր.՝ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 215:

¹⁰ Նույն տեղում, էջ 217:

դական բանահյուսությանը: Ս. Սարինյանը, որը երկարատև զբաղվել է Պոռոշյանի վեպերի քննությամբ, «Մոս և Վարդիթեր» վեպի վերաբերյալ ունի հետևյալ խորհմաստ նկատումը. «Չի գիտակցվում մի սկզբունքային հանգամանք, որ Պոռոշյանի նկարագրած նահապետական համայնքն ամբողջապես սուզված է միֆոլոգիայի ոլորտը, և կյանքը կառուցված է բանահյուսության օրենքներով, այսինքն՝ սոցիալական իրականությունն ինքը բանահյուսություն է: Այստեղ է կայանում վեպի գեղարվեստական միասնությունը, այլոժեի, կերպարների, բարքերի ու հասկացությունների ներքին համաչափությունը»¹¹:

«Մոս և Վարդիթեր» վեպում լայնորեն սփռված են առած-ասացվածքներ, սիրո երգեր, աշուղական երգերի որոշ տարբերակներ: Մի քանի առած-ասացվածքներ համընդհանուր են և կան նաև ուրիշ ժողովուրդների մոտ: Բերենք դրանցից երկու օրինակ: «Երկաթը տաք-տաք կծեծեն»: Այս ասացվածքը կա գրեթե աշխարհի բոլոր այն ազգերի մոտ, որոնք զբաղվել են երկաթագործությամբ: Նշենք նաև, որ միջազգայնորեն Հայաստանը ճանաչված է որպես երկաթագործության հայրենիք: Այս առած-ասացվածքն ունի և՛ ուղղակի, և՛ փոխաբերական իմաստ. «Երբ երկաթը կարմրած է ջերմությունից, այն հեշտությամբ կարող է ստանալ ցանկացած ձևը, իսկ սառը վիճակում դա անել անհնար է: Փոխաբերական իմաստն էլ այն է, որ մարդ պետք է ընտրի ճիշտ պահը որևէ գործ կատարելու համար, եթե պահը կորչում է, անհնար է դառնում այն իրականացնել»¹²:

Բերենք նույն իմաստախոսության տարբեր լեզուներով ձևերը.

Հայկականը՝

«Երկաթը տաք-տաք կծեծեն»:

Ռուսականը՝

«Куй железо, пока горячо».

¹¹ Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, գիրք III, Երևան, 2002, էջ 157:

¹² Ա. Դոլուխանյան, Համընդհանուր իմաստախոսություններ, Երևան, 2012, էջ 80:

Տրանսիականը՝

«Le faut battre le fer quand it est chaud».

Կամ մեկ ուրիշ առած-ասացվածք. «Մի փունջ ծաղկով մայիս չի գա»: Այս նույն իմաստն ունեն հետևյալ իմաստախոսությունները՝

Հայկականը՝

«Մի ծաղկով գարուն չի լինի»:

Անգլիականը՝

One swallow does not make a summer.

Ռուսականը՝

«Одна ласточка весны не делает».

Տրանսիականը՝

«Une hirondelle ne fait pas le printemps»

Քանի որ «Մու և Վարդիթեր» վեպում օգտագործված առած-ասացվածքները շատ-շատ են, մենք կանդրադառնանք հատկապես այնպիսիներին, որոնք այսօր էլ գործածվում են առօրեական խոսքում. «Գողը որ տանու ըլի, եզը երթկովը դուրս կքաշի»: Մա զգուշացում է տանը եղած դավաճանության մասին: Երբ մեկի հետ որևէ դժբախտություն է պատահում, ապա չպետք է ուրախանալ, որովհետև ժողովրդական առածն ասում է՝ «Էս ուղտը քո դրանն էլ կչոքի»:

«Գելից փախա, արջի ճանկն ընկա» իմաստախոսության մի տարբերակն օգտագործել է Գրիգոր Նարեկացին իր հանճարեղ «Մատենանոցի բարեբան» երկում.

*Ոմն մարգարե պատկերում է մեզ այս օրինակով:
Ասենք փախչում է մեկը առյուծից,
Եվ արջն է դեմից պատահում նրան,
Փախչում է արջից ու մտնում է տուն,
Ձեռքը հենում է պատերից մեկին,
Եվ հանկարծ նրան խայթում է մի օձ¹³:*

¹³ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, թարգմ.՝ Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979, էջ 476:

Հիմա էլ առօրյայում կարելի է լսել. «Թե ուրանամ, երկու անգամ կուրանամ»: Սա անխախտ հավատարմության երդում է, որն այնքան կարևոր է մարդկային կյանքում:

Նույնքան տարածված է. «Խաչին տերը գորավոր կանի» իմաստուն խոսքը:

«Սոս և Վարդիթեր» վեպում օգտագործված «Ձվաձեղի խաթեր թավի կոթը կպաչեն» առածը «Հացի խնդիր» վեպի ԺԵ. գլխի վերնագիրն է: Այդ վերնագիրը դրված է ԺԵ գլխի վրա¹⁴:

«Մուկը ծակը չէր մտնում, ցախավելն էլ պոչիցը կապեցին»: Հայտնի իրողությունն է, որ մկները կարող են փոքրիկ անցքով ներս մտնել: Նույնքան հայտնի է, որ ցախավելը ծառի ճյուղերից կապած ավել է, որով փողոցից մաքրում են խոշոր աղբը: Խոսքն այս առածում մարդու գերզբաղվածության մասին է, երբ բազմազբաղության վրա ավելացնում են նոր պարտավորվածություն ու անելիք:

«Եզը վեր են կացնում, տակիցը հորթ ուզում»: Հայտնի է, որ եզը չի կարող հորթ ունենալ: Այս իմաստախոսությունը շատ տարածված է, որովհետև երբեմն մարդուն վարկաբեկում են մի արարքի համար, որ նա չէր էլ կարող կատարել: Այսօր շատ գործածական առածասացվածքներից թվարկենք մի մեծ խումբ.

ա) «Շան հետ աղպերացի, փետը ձեռիցդ մի՛ վեր քցի»:

բ) «Շատ գիտցող աղվեսը ջուխտ ոտով թալաք կրնկնի»:

գ) «Շատ դատես, շատ ուտես»:

դ) «Շիտակ խոսքը հանաքով կասեն»:

ե) «Շունը կհաչի, քարավանը կքոչի»:

զ) «Ուրբաթը թեզ եկավ, քանց շաբաթը»:

է) «Պղինձը վեր ընկավ, կոտրվեց ոչ, համա ձենը վեր էլավ»:

ը) «Ջուրն իր ճամփեն կգտնի»:

թ) «Ջրի ափը չհասած, ոտները հանել»:

ժ) «Ջրի հետ գնալ, ավազի հետ մնալ»:

¹⁴ Պ. Պոռշյան, Երկերի ժողովածու, հտ. 1, էջ 402:

ժա) «Մանդն էլ ա իրա ձեռին, պոպոքն էլ»:

ժբ) «Սովածը հաց կտեսնի երագում, ծարավը՝ ջուր»:

ժգ) «Տանուտերի վկեն գգիրն ա»:

ժդ) «Փարչ, քեզ ասեմ, կուլա, դու լսիր»:

ժե) «Փեղը վերցնես, գող շունը կհմանա»:

Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առած-ասացվածքների գանձարանից հետո Պոռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպը դարձավ հայ ժողովրդական իմաստուն խոսքի գանձարան:

«Սոս և Վարդիթեր» վեպում Նալբանդյանին հատկապես դուր են եկել ազգագրական հատվածները, որոնց արմատները ձգվում են հայ ազգի խոր անցյալը: Դրանցից նուրիհի սովորություն է, որը ինչ-որ ձևով կապվում է սուրբ Գևորգի մասունքի հետ: Վեպում կարդում ենք. «Երեխեքն էլ նուրին շինեցին ու ման ածեցին: Երկուսը կոնիցը բոնեցին, մեկն էլ տոպրակ ա վեր կալել, մեկելն էլ մի պատի բժուլթ (կճուճ) ու ման են գալի տները: Ո՛ր դռան առաջին կանում են, ասում են.

Նուրին նուրինն էկել ա,

Աջբա հուրին էկել ա,

Շիլա շապիկ հագել ա,

Կարմիր գոտիկ կապել ա:

Եղ բերեք պորտը քսենք,

Ջուր բերեք գլխին ածենք,

Մեր նուրինի փայր տվեք,

Ուտենք, խմենք, քեֆ անենք»¹⁵:

Աշտարակի կանայք մի աման ջուր են բերում, լցնում նուրինի գլխին, երեխաներին բրինձ, յուղ կամ ձու տալիս, որ տանեն քեֆ անեն: Վեպի այս հատվածը շատ հուզել է Նալբանդյանին, որովհետև հիշում է, թե ինչպես իր մանկության օրերին Նոր Նախիջևանի պանավները երգում էին նուրինի մասին հետևյալ երգը.

¹⁵ Նույն տեղում, էջ 95:

*Նորին նորին Նազարեթ,
Նորինը բաղան էկիլ է,
Շալե շապիկ հագիլ է,
Կարմիր գոտի կապիլ է...¹⁶*

Մանուկ Նալբանդյանը կամեցել է Նոր Նախիջևանի պատավներից իմանալ, թե ով է կամ ինչ է նուրինը, սակայն պատասխան չի ստացել: Նա շեշտել է, թե նախիջևանցիներն անեցիներ են, որոնք 14-րդ դարում դեռ հիշում էին նուրինի ազգագրական սովորույթը: Նա հայտնում է իր հիացմունքը վեպի այդ հատվածի համար. «Անշուշտ, եթե ավանդությունը կորել է, հեղինակը պատասխանատու չէ, բայց այդպիսի դիպվածում էլ բնավ ավելորդ չէր գո՛նե մի բացասական ծանոթություն: Մենք հույս ունինք, որ մեծարգո Պոռոջանցը ուրիշ անգամ ավելի շատ հանդես հանե այդպիսի տեղեկությունք և ավելի կատարելությամբ առաջ տանի սկսածը: Մենք քաջ գիտենք, որ Սոս և Վարդիթերը չէ հատցրել նորա պաշարը, մանավանդ, որ դեռ շատ բան մնում է, որին բնավ չէ դիպել հեղինակի գրիչը»¹⁷:

«Սոս և Վարդիթեր» վեպում կան մի շարք ժողովրդական սիրերգեր: Աբովյանից ու Ալիշանից¹⁸ հետո Պոռոջանն առաջիններից էր, որ նվիրյալ բանահավաքի նման հայկական ժողովրդական երգերը գրառել ու տպագրել է: Այդ առումով նա իսկական բանագետ էր:

Ժողովրդական տոնախմբություն է Աշտարակում: Ջահել տղաներն ու աղջիկները յալլի են բռնում, պարում ու երգում: Երգի մի տուն տղաներն են ասում, մի տուն էլ՝ աղջիկները: Գալիս է վեպի գլխավոր հերոսի՝ Սոսի երգելու հերթը, և նա հանպատրաստից երգում է մի գեղեցիկ սիրերգ.

¹⁶ Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 4, էջ 195:

¹⁷ Նույն տեղում, էջ 196:

¹⁸ *Sé u* Armenian popular songs translated into English by the R. Leo M. Alishan DD, Venice, 1852.

*Միրելի՛ ջան, հեռացար,
Չըլինի՞ ինձ մոռացար.
Մրտումս վառ ա քու սերը,
Էրում ա ջիզյարիս ծերը¹⁹:*

1905 թ. Կոմիտասն ու Մ. Աբեղյանը՝ Գևորգյան ճեմարանի երկու ուսուցիչները, Վաղարշապատում հրատարակել են բանահյուսական գոհարների գանձարան «Հազար ու մի խաղ» գիրքը, որը 1969 թ. վերահրատարակվել է Ռ. Աթայանի համառոտ նախաբանով. «Այս «խաղերն» անբաժանելի են Կոմիտասի ողջ երգային ստեղծագործություններից, որն ինքնին մի աննման կոթող է հոգու հարստության և արիության տեր ժողովրդին, նրա ֆիզիկական և հոգևոր տոկունությանը, ազատասիրական ոգուն և պայծառ վերածննդին»²⁰:

Երբ համեմատում ենք «Հազար ու մի խաղ» ժողովածուի սիրերգերը «Մոս և Վարդիթեր» վեպում Պոռոջյանի գրառածների հետ, տեսնում ենք ընդհանրություններ.

«Մոս և Վարդիթեր»

*Միրելի՛ ջան, հեռացար,
Չըլինի՞ ինձ մոռացար.
Մրտումս վառ ա քու սերը,
Էրում ա ջիզյարիս ծերը.²¹ :*

«Հազար ու մի խաղ»

*Չինար ես, կեռանա՛լ մի,
Մեր դրոնեն հեռանա՛լ մի,
Յա՛ր, քո Աստված կսիրես,
Հեռու ես, մոռանա՛լ մի²²:*

Միրո երգերը Պոռոջյանի վեպում կապվում են Մոսի հետ, որն այրվում է Վարդիթերի սիրուց: Նա իր երգում գովերգում է սիրելիի աչքն ու ունքը, որոնք նման են ծիածանին ու արևին, անուշ խոսելը, երկար մինչև ծունկը հասնող գանգուր մազերը, վարդագույն այտերը, սլացիկ հասակը, բամբակի պես սպիտակ մաշկը: Մոսը հայտնում է նաև իր տարիքը՝ ինքը քսաներկու տարեկան է.

¹⁹ Պ. Պոռոջյան, Երկերի ժողովածու, հտ. 1, էջ 141:

²⁰ Հազար ու մի խաղ, ժողովրդական երգարան, խմբ.՝ Կոմիտաս և Մ. Աբեղյան, Երևան, 1969, էջ 2:

²¹ Պ. Պոռոջյան, Երկերի ժողովածու, հտ. 1, էջ 141:

²² Հազար ու մի խաղ, էջ 12-13:

*Մն մազերիս մի խաբվեք, սև սրտիս միտք արե՛ք,
Սոսի դարդն էս դու, աղջի՛կ, ինձ մի դեղ ու ճար արա՞²³:*

Հայ աշուղների մոտ տարածված վարդի և բլբուլի այլաբանությունը Սոսի անունից ասվում է որպես աշուղական երգ: Ահա այդ երգի մեջ էլ աշուղների նման Սոսը վերջին քառատողում հիշատակում է իր անունը.

*Գարնան վարդ ա՛ր բյուլբյուլ ունի,
Ինձ դռանը միշտ դուլ ունի,
Վարդ բյուիլբյուլի սուրբ խորհրդին
Ես մի բարի վախճան կուզեմ...
Չի ասեք, թե Սո՛ւ, քանի՞ լաս,
Վարդ կանչելով միշտ մղկտաս.
Սաղ վարդը ձեզ՝ մի թերն էլ ինձ,
Աստված անի արժան կուզեմ՞²⁴:*

«Սոս և Վարդիթեր» վեպն ավարտվում է ժողովրդական սգերգով, որն ասվում է վեպի կարևոր հերոսներից մեկի՝ Գարեգինի անունից: Սգերգի այդ տեսակն առկա է նաև Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի վերջում, որում անմուրազ սիրահարները միայն հանդերձյալ կյանքում վայելում են իրենց փոխադարձ սերը.

*Էն վեհ վայրկենին չքքնաղ գիշերի՛
Երկրնքի անհու՛ն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս,
Գալի՛ս կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռու՛, լազուր կամարում²⁵:*

Գարեգինի սգերգի վերջում էլ այն հասվածքը կա, թե Սոսն ու Վարդիթերն իրենց սիրուն հասնելու են երկնքում.

²³ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հտ. 1, էջ 148:

²⁴ Նույն տեղում, էջ 205:

²⁵ Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 3, Երևան, 2019, էջ 114:

*Նահատակներ յ զույգ, ձեր հողին մեռնիս
Ձեր սուրբ հիշատակն ես միտս ունիս.
Դուք ձեր փափաքն երկնքումն առաք,
Գարեգիհն էլ ձեզ մոտ կստանա նոր կյանք²⁶:*

Եզրակացություն

Պերճ Պռոշյանն իր անդրանիկ վեպը գրել է երիտասարդ հասակում՝ 23 տարեկանում: Վեպի ներշնչանքի աղբյուրը եղել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» գլուխգործոցը: Պռոշյանն իր վեպում ոչ թե Աբովյանի նման տվել է ազգային-ազատագրական ծրագիր, այլ կամեցել է հավերժացնել հարազատ Աշտարակի՝ իր համար այնքան սիրելի հայրենակիցների վարքն ու բարքը, սովորությունները, չարի ու բարու նրանց ընկալումները: Հետևելով Աբովյանին՝ Պռոշյանն օգտագործել է բանահյուսական նյութեր, որոնք վեպին հաղորդել են ազգագրական ու ճանաչողական մեծ արժեք:

Նշանավոր բանագետ Ա. Ղանալանյանը, որը, անշուշտ, ծանոթ էր Մ. Նալբանդյանի «Կրիտիկա Սոս և Վարդիթեր» մեծարժեք գրաքննադատական հետազոտությանը, 1938 թ. հրատարակել է «Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը» գիրքը, որը լայնորեն օգտագործել են հետագայի այն գրականագետները, որոնք ուսումնասիրել են Պռոշյանի ստեղծագործությունը:

«Սոս և Վարդիթեր» վեպից պարզ է դառնում, որ Պռոշյանը եղել է նաև բանահավաք, և հայ ժողովրդական բանահյուսությունն առկա է գրեթե նրա բոլոր ստեղծագործություններում: Վեպում օգտագործված բանահյուսական նյութերն ունեն դաստիարակչական ուղղվածություն ու կնպաստեն աշակերտներին բարոյական դասեր հաղորդելու կարևոր գործին:

²⁶ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հտ. I, էջ 289:



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ «ՀԱՅԻ ԽՆԴԻՐ» ՎԵՊՈՒՄ

ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

Ներածություն

Բոլոր գրականագետները, որոնք երկար ժամանակ զբաղվել են Պերճ Պռոշյանի ստեղծագործությամբ, անվերապահորեն հեղինակի գլուխգործոցը համարում են «Հացի խնդիր» վեպը, որը վերջինս գրել է կյանքի հասուն շրջանում: Այդ վեպից պարզորոշ երևում է, թե որքան խորն է ճանաչում գրողը XIX դարի երկրորդ կեսի հայ գյուղը՝ իր բազում խնդիրներով: Իրավացի է Շիրվանզադեն, երբ Պռոշյանին, որպես գրող, բնութագրում է հետևյալ ձևով. «Նա մեր գյուղական կյանքի, նրա վարք ու բարքի ու ավանդությունների ամենախոշոր պատկերահանն էր ավելի մանրակրկիտ, քան տաղանդավոր»¹: Նույն հուշագրության մեջ Շիրվանզադեն ավելացնում է. «Նա տիպեր չի ստեղծել, սովել է միայն բնույթներ, մեկը մյուսից տարբեր»²: Սակայն գրականագիտության մեջ ընդունված կարծիք է, որ Պռոշյանը ստեղծել է տիպեր: Պրոֆեսոր Ա. Բաբայանն իր ծավալուն «Պերճ Պռոշյան»

¹ Ալ. Շիրվանզադե, Կյանքի բովից, Ուղեգրություններ, Հուշեր, Երևան, 1988, էջ 179:

² Նույն տեղում:

մենագրության մեջ գրում է. «Միկիտան Սաքոն ռեալիստական տիպ է, և Պոռոշյանն այն կերտել է թանձր գույներով ու մեծ արվեստով: Նա որպես գեղարվեստական կերպար ոչ միայն իրական սոցիալական պայմանների ծնունդ է, իրականում եղած նրա նման անձնավորությունների հավաքական արտահայտությունը, այլ նաև ունեցել է կյանքում իր նախատիպը»³:

Գրականագիտական բառարանում կարդում ենք. «Ամեն մի գրական կերպար տիպ կոչվել չի կարող: Տիպը բացառիկ մեծ ընդհանրացում է, որի մեջ խտանում են մի ամբողջ դասակարգի, ազգության կամ դարաշրջանի մարդկանց հատկանիշներ: Նա դառնում է հասարակ անուն, նա «ընթերցողի համար ծանոթ անծանոթ է (Բելինսկի)»⁴: Նույն գրքում բերվում են համաշխարհային ու հայ գրականության մեջ կերտված տիպերը, ինչպես Բալզակի Գոպսեկը, Գոգոլի Պլյուշկինը «Մեռած հոգիներից», Խլեստակովը «Ռեիզորից», Աբխտղոմ աղան Շ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններից», Միկիտան Սաքոն Պոռոշյանի «Հացի խնդիր» վեպից և Նար-Դոսի Լևոն Շահյանը «Մահը» վեպից⁵:

Միկիտան Սաքոն ու Խեչանենց Խեչանը տիպաբանական կերպարներ «Հացի խնդիր» վեպում

Միկիտան Սաքոն և Խեչանենց Խեչանը «Հացի Խնդիր» վեպի երկու հիմնական կերպարներն են, որոնց շուրջ պտտվում են վեպի գործողությունները:

«Հացի խնդիր» վեպն ունի շեշտված սոցիալական ուղղվածություն: Նալբանդյանը «Մոս և Վարդիթեր» վեպում շատ հավանել էր գրքի բանահյուսական հատվածները, նաև այն դրվագը, երբ Աշտարակի երկու գյուղացիները գիշերը այգում թորում են օղի և բողբոջում իրենց ծանր վիճակից: Դա վեպի հետևյալ հատվածն է. «Մեր գեղի

³ Ա. Բաբայան, Պերճ Պոռոշյան, Երևան, 1962, էջ 115:

⁴ Էդ. Ջրբաշյան, Շ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, 1972, էջ 288;

⁵ Նույն տեղում, էջ 289:

ամեն բանն էլ լավ ա, ափսո՛ս, որ քեթխուղեքն (իշխաններն) ու տանտերը մի քիչ շահասեր են: Ես ի՞նչ ա, հիմա խուրջ են կիտում, ես մի խեղճ մարդ եմ, նրանք ինչ որ ինձ կհասներ խուրջը տալու, էրկու էնքան են առել: Մաքի ասում են, որ գեղի միջին տարեկան մասրաֆ (ծախք ա) էլ էլ, փչացել ա, պտի լրացնենք. համա որտեղ քոմմա իրանք են ուտում, քյասիբ-քյուսուբի (չքավորի) տունը քանդում, իրանցը շինում: Ես գրող մնա (որպես թե) մի հիքի ունիմ, ինձ տարել են գոռով կապել իրեք հիքաստիրոջ հետ, թե արի խարջ տուր. էլ չեն ասում, թե աչառը (արջառ) գոմեշի հետ կարա լուծն անի՞լ»⁶: Այս հատվածը նույնությամբ մեջբերված է Նալբանդյանի «Կրիտիկա «Սոս և Վարդիթեր» գործում: Հայտնի է, որ Նալբանդյանի գրաքննադատական այդ երկը լույս է տեսել միայն 1935 թ. և մինչև այդ չէր տպագրվել: Սակայն Պռոշյանի «Հացի խնդիր» վեպը ճիշտ և ճիշտ Նալբանդյանի պահանջների կատարումը կարծես լինի: Իր գրաքննադատական նկատումներում Նալբանդյանը գրում է. «Տխրություն է գալիս մեր վրա, երբ հիշում ենք, թե հարստահարված երկրագործը կամ շինականը բռնադատված է լուռ մնալ իր հարստահարիչների ընդդեմ և միայն գիշերով, ծածուկ խորհրդական առանձնության մեջ բողոքել, երբ ոչ ոք չէր լսում նրա բողոքը...»⁷:

Նկատենք նաև, որ հայ գյուղի համար տիպական կերպար է Խեչանենց Խեչանը, որը Պռոշյանի իդեալն է: Գրողը համոզված է, որ գյուղի կյանքը կերտողները Խեչանենց Խեչանի նման մարդիկ են: Խեչանը աշխատասեր է, բարի, առատաձեռն, սիրում է իր հայրենի գյուղը, իր ապահով կյանքը վաստակել է աշխատասիրության շնորհիվ: Խեչանի կյանքի սկզբնական ընթացքը Պռոշյանի երազանքն է. հայ գյուղացին պետք է երջանիկ ապրի իր խաղաղ, ստեղծագործ աշխատանքով: Ազնիվ Խեչանը չի էլ պատկերացնում, թե իրեն կարող են խաբել, նույնիսկ կործանել: Նա հեռու է արատավոր գծերից ու ապ-

⁶ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հտ. I, Երևան, 1953, էջ 214:

⁷ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հտ. 4, Երևան, 1983, էջ 230:

բում է ըստ Աստվածաշնչի տասը պատվիրանների: Ինչ-որ առումով իրենց ազնվությամբ Ա. Բակունցի Արթին պապը «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքից և Խեչանենց Խեչանը հոգեհարազատ եղբայրներ են մարդու նկատմամբ ունեցած իրենց հավատով:

Գրքում նկարագրվում է Աշտարակի կյանքը երեսուն-քառասուն տարի առաջ, երբ գյուղը պարսկական տիրապետության տակ էր, և Խեչանը երիտասարդ էր: Խանն այցելում էր գյուղ՝ սարսափ տարածելու հրահանգներով, և գյուղի մարդիկ նրան ընծաներ էին բերում՝ ընտիր օղի, յուղ, բրինձ, ոչխար: Հետո՝ տարիներ անց, գյուղում հայտնվում են ցարական շինովնիկները: Երկու կարգերի ժամանակ Խեչանն օր ու գիշեր աշխատում էր: Թեպետ նա հարուստ էր, սակայն միայն կիրակի օրերը կարելի էր Խեչանի ոտքին կոշիկ տեսնել: Մնացած օրերը, տրեխները ոտքերին, մի հնամաշ չուխա հագած կա՛մ տանն էր գործ անում, կա՛մ բանվորների հետ՝ այգիներում⁸:

Խեչանը և նրա եղբայրը իրենց աշխատասիրությամբ մեծ հարստություն են կուտակում, սակայն Խեչանի եղբոր ոտքերը ցրտահարվում են բքարգելի ժամանակ գյուղ վերադառնալիս: Երեք օր անկողնում պառկելուց հետո վախճանվում է, և ողջ հարստությունը մնում է միայն Խեչանին: Խեչանն ուներ ընդամենը մեկ աղջիկ, որն իրավունք ուներ տիրանալու նրա հարստությանը: Ահա այս աղջկա՝ Հեղնարի հետ ամուսնանալու համար էլ շատ-շատերն էին երագում: Մանուկ հասակում Խեչանենց Խեչանը և Ծվիկենց Աղաջանը իրենց զավակներին բաշիքյարթմա էին արել. «Խեչանենց Խեչանի և Ծվիկենց Աղաջանի մեջ երեխաներին բաշիքյարթմա արած օրից մի ամուր բարեկամություն հաստատվեց, նրանց տները համարյա միացան, մի դրգալ տաք ու հովը բաժանում էին իրար հետ»⁹:

Խեչանի կինը վաղուց մեռած էր, և վերջինիս միակ աղջկան մայրություն էր անում Խեչանի քույրը, որն իր եղբոր տանն ապրում էր իր աղջկա՝ Հերիքնագի հետ: Հերիքնագն ու Հեղնարը հասակակիցներ

⁸ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հտ. I, էջ 356:

⁹ Նույն տեղում, էջ 366:

էին, մեծանում էին միասին ու իրար հետ ջերմ էին՝ որպէս հարազատ քույրեր: Սմբատը՝ Հեղնարի փեսացուն, որը մի երեք-չորս տարով մեծ էր քույրերից, նրանց տուն եկած ժամանակ իրեն պահում էր որպէս իսկական եղբայր ու շարունակ խաղում էր նրանց հետ. «Ոչինչ բան չէր խանգարում երեխաների պարզ միտքը, սերն էր թագավորած նրանց մեջ, քանի նրանք մանկության տարիների մեջ էին»¹⁰: Ամեն ինչ փոխվում է, երբ հասուն Սմբատը մի օր ուշադիր նայելով երկու քույրերին՝ իր մտքում մտածում է, որ Հերիքնագն ավելի սիրուն է¹¹:

Սմբատի վերաբերմունքը դեպի քույրերը չի փոխվում. նա բարոյական չափանիշների կրող է և հավատարիմ է Հեղնարի հետ իր նշանված լինելու իրողությանը:

Գյուղերում բաշխքյարթմայի սովորության վտանգավոր կողմերը բացահայտված են վեպում: Նշանված Հեղնարը սիրահարվում է իրենց հարևանի որդուն, որի հետ թաքուն հանդիպում է երկու հարևաններին բաժանող պատի դրիջակի՝ պատի մեջ բացված մի մարդու գլխի չափ անցքի միջոցով: Այս միջադեպը հայտնի է դառնում թե՛ Սմբատին և թե՛ Հերիքնագին, սակայն նրանք գաղտնիքը պահում են՝ Խեչանենց Խեչանի պատիվը պահելու համար:

Հարևանի տղա Արշակը, որը սիրահետում էր Հեղնարին, իր մտքում միայն ցանկություն ուներ՝ տիրանալ Խեչանի հարստությանը:

Խեչանենց Խեչանին սպասում էր մեծ փորձություն: Նա չգիտեր, որ Աշտարակի ամենամեծ խաբեբան՝ Միկիտան Սաքոն, գյուղի տերտերի, մովրովի միջոցով խափանել է Հեղնարի ու Սմբատի ամուսնությունը՝ իբր էջմիածնից եկած կարևոր թղթով: Ահա արդար հայ գյուղացու նկարագիրը, որը հեզնանքով ներկայացնում է ցարական կառավարության ներկայացուցիչը՝ մովրովը.

- Առաջ արի՛, աղա՛ Խեչան,- հեզնաբար հրամայեց մովրովը,- ի՞նչ ես գլուխդ կախել, սուտ տրտմություն երեսիդ կիտել, քեզ պես ծեր աղվեսների շատ եմ հանդիպել, իմ ձեռքիցս չես կարող փախուստ

¹⁰ Նույն տեղում, էջ 367:

¹¹ Նույն տեղում, էջ 369:

տալ: Ես վաղուց գուշակում էի, որ դու ճգնավորի հագուստով սատանա պետք է լինեիր, վաղուց քո հետքը դիտում էի, բայց չէի կարողանում բռնել քեզ, սատանա էիր և սատանաների ամենից խելացին ու ճարպիկը. գառնազգեստ գա՛յլ դու, գավառի բարերարն էիր հանդիսանում, առանց տոկոսի փող էիր պարտք տալիս, աղքատների ու անկարողների հարկերն էիր վճարում, ամենքի աչքերն էլ հող ու մոխիր էիր փչում ու ռամիկ ժողովրդի գովասանքն ու համակրությունը գովում, նշանակում է, որ դու մտքումդ դրել էիր էս խեղճ բեզգադայի արևը մթնացնելու և վերջը ժողովրդի միջնորդությունով արդարության ձեռքից դուրս պրծնելու»¹²:

Մովրովի խոսքերով բնութագրվում է Խեչանենց Խեչանի ազնվական վարքագիծը, որը հակապատկերն էր նոր ձևավորված գյուղական ցեղերի ու ցարական մեծ ու մանր չինովնիկների, որոնց համար օրենք էր դարձել կաշառք վերցնելը: Իսկ ազնվական գծերով օժտված Խեչանենց Խեչանը նրանց հակապատկերն էր, դեռ ավելին՝ նա հարուստ էր ու բոլորովին նման չէր նրանց: Նման արդար մարդկանց միշտ մեղադրում են հանցանքների մեջ, որոնք նրանք չեն գործել, բնութագրում են այնպիսի արարքներով, որոնք հենց մեղադրողների ապրելակերպի ձևերն են: Բնականաբար, ինչպես Հ. Թումանյանի «Հառաչանք» պոեմի ութսունամյա ծերունին, ինչպես ազնվագույն Արթին պապը, պատժվում են բիրտ ուժերի կողմից:

Սա հայ գյուղի նահապետական ազնիվ գծերը պահպանած, անձանձիր աշխատող տիպական կերպարի խորտակումն է տիրող բիրտ ուժի առաջ: Խեչանենց Խեչանը, որքան էլ իմաստուն լիներ, չէր կարող չդառնալ խարդավանքի զոհ և բանտ ընկնել: Վեպի վերջում արդարադատ քննիչը պարզում է Խեչանենց Խեչանի անմեղությունը: Բայց արդեն ուշ էր: Վերջում Խեչանը և նրա աղջիկը՝ խարդավանքի երկու զոհերը, վախճանվում են: Գրականագետները ճշտորեն նկատել են, որ արտակարգ ռեալիզմով աչքի ընկնող «Հացի խնդիր» վեպի անթերի տիպական կերպարը Միկիտան Սաքոն է: Պատահական չէ,

¹² Նույն տեղում, էջ 528:

որ այն կրթված հայերի խոսակցական առօրյայում դարձել է հասարակ անուն, որ նշանակում է գերագույն խաբեբա: Ըստ որում, սա մի տիպ է, որ կա նաև հիմա և դեռ լինելու է: Թվում է, թե նման տիպերն անմահ են: Իսկ ո՞վ է Միկիտան Սաքոն՝ ըստ վեպի: Նա վեպում հայտնվում է հենց սկզբից՝ «Միկիտան Սաքոն» խորագրի ներքո: Գրականագետները պարզել են Միկիտան Սաքոյի նախատիպի ով լինելը:

Պռոշյանը, հետևելով Խաչատուր Աբովյանի պատվիրաններին, կամենում էր Հայաստանի տարբեր վայրերում դպրոցներ բացել, որովհետև գյուղի երեխաները ոչ միայն կրթություն չունեին, այլև գրաճանաչ չէին: Նա կամենում էր եկեղեցուն կից օրինակելի դպրոց բացել և դիմում է Բյուրականում հանգստացող ազնվական Մարկոս Դուրխանյանին, որին ճանաչում էր Թիֆլիսից: Վերջինիս օգնությամբ որոշվում է երկու եկեղեցիների համար միասնական դպրոց բացել «Սուրբ Մարինե» եկեղեցու բակի մեջ գտնվող նոր շենքում: Պռոշյանը գրում է դպրոցի կանոնադրությունը, պատրաստում անցնելիք նյութերի ծրագրերը և պատրաստվում մեկնել Թիֆլիս, սակայն Ամենափրկիչ եկեղեցու վարժապետ, քահանա Սարգիս Բզնունին՝ իմանալով, որ իր սաները պետք է գնան նորաբաց դպրոցը, սաղորում է Պռոշյանին՝ ասելով. «Մարդի՛կ, հասարակությո՛ւն, գիտե՞ք սա ով է, սա ֆարմասոն, անաստված, անհավատ Շանշյանի աշակերտն է... Սա մեր հոգևորականներին չի հավանում, շուն է կոչում...»¹³: Խոր հավատացյալ, ուսումնական գործին նվիրյալ Պռոշյանին այնպես են խոցում այս խոսքերը, որ նա վրդովված պատասխանում է. «Ես այդպես խոսք ո՛չ ասել եմ և ո՛չ կասեմ, բայց եթե մեր բոլոր եկեղեցականքը քեզ նմաններն են լինելու, ժամկոչից մինչև կաթողիկոսը, ամենքն էլ շանից վատթար են այն ժամանակ իմ համար...»¹⁴:

Ահա այս Սարգիս Բզնունին դարձել է Միկիտան Սաքոյի նախատիպը: Միկիտան Սաքոյի ով լինելն անհայտ էր: Նա սև ջրի գլխին

¹³ Ս. Մանուկյան, Պերճ Պռոշյան, Երևան, 1987, էջ 67:

¹⁴ Նույն տեղում:

գինետուն ուներ, հայտնվել էր տասը-տասներկու տարեկանից ու քարշ էր գալիս գորանոցների գինեվաճառների դռներին: Մակայն ոչ մի գինեվաճառ նրան երկու-երեք ամսից ավելի չէր պահում, որովհետև «...գալում լակոտը մոր կոճակ կտրող է եղել, աչքի սուրմա թոցնող»¹⁵:

Միկիտան Մաքոն գողանում էր գինետների հաճախորդների գրպաններից, նույնիսկ գինեվաճառի ծոցից գիշերը թոցրել էր նրա քսակը: Մաքոն դառնում է Այդր լճի ամառաթի գինեվաճառը և սկսում կապեր հաստատել յասավուլների, ցարական չինովնիկների, հոգևորականների, անգամ մովրովի հետ: Մաքոն շատ սիրալիր էր իր հաճախորդների հետ, սակայն հյուրասիրության վերջում այնպիսի գին էր ասում, որ խեղճերը կորցնում էին խոսելու ունակությունը:

Իր խաբեության գագաթնակետը Հեղնարի հետ ամուսնանալու համար կազմակերպած խարդավանքներն էին: Նա գիտեր, որ Հեղնարի հարստության համար շատերն էին երազում նրա հետ ամուսնանալ: Նա չէր ամուսնանալու Հեղնարի հետ, այլ Խեչանի հարստությունն էր նրա կյանքի նպատակը: Մաքոն ինքն իրեն խոստովանում է, թե ինչու ոչ մի արգելքի ու ստորության առաջ կանգ չի առնելու, միայն թե Հեղնարի հետ ամուսնանա. «Ես հո Խեչանի աղջկանը չե՛մ առնում, նրա մալն ու դովլաթը պտի ըլնի իմ կնիկը. աղջիկը թեկուզ քոռ ու քաչալ էլ ըլնի, թեկուզ ինձ չսիրի էլ, նրա կյանքը ընչանք երեխա բերելն ա. ընդուց հետո բարի՛ ճանապարհ, թե իր կամքովը չգնա՝ դրկելն իմ շլինքին»¹⁶:

Մաքոն ուներ միայն մեկ Աստված՝ փողը: Յասավուլ Մարգարի հետ կյանքի օրենքներից խոսելիս Մաքոն շարունակ շեշտում է, թե մարդիկ ապրում են հանուն հացի. «Յասավուլ ես, տասը մովրով ես փոխել, ըսկի մինն էլել ա՞, որ գա ու խալիսին չգոփի, մհալի տունը չքանդվի, մհալը փորը չկոխի. ընչի՞՞ համար – հացի, մի կտոր հացի»¹⁷:

¹⁵ Պ. Պոռշյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հտ. 1, էջ 314:

¹⁶ Նույն տեղում, էջ 470:

¹⁷ Նույն տեղում, էջ 334:

Ագահությունը, մամոնային ծառայելու մոլուցքը խախտում են հասարակության պատվիրաններով ապրելու աստվածային պահանջը: Այդ մասին XI դարում իր պատմության մեջ մի քանի առիթներով բողոքում է Ժամանակի նշանավոր պատմիչ Արիստակես Լաստիվերցին: Նա մամոնայի պաշտամունքի հետևանքն է համարում հայ Բագրատունիների թագավորության կործանումը. «Արդարության օրենքը փոխվեց անիրավության, արծաթասիրությունը ավելի հարգի դարձավ քան աստվածասիրությունը, և մամոնան ավելի՝ քան Քրիստոսը»¹⁸: Խորին ցավով պատմիչը խոսում է վաշխառության և հանուն հարստանալու մոլուցքի ընկերոջը խաբելու մասին. «Ով խաբում է իր ընկերոջը, պարծենում էր, որ խելացի է, իսկ ով հավիշտակում էր, ասում էր՝ «ես հզոր եմ»¹⁹:

«Հացի խնդիր» վեպում ներկայացվում է Սաքոյի վաշխառու լինելու մի շարք դրամատիկ դրվագներ: Հատկապես տիպական է այն դրվագը, երբ ջերմորեն սիրաշահելով գյուղացի Կարոյին՝ Սաքոն շարունակ բարձրացնում է գյուղացու պարտքի տոկոսը:

Սաքոյի առջև բաց էին բոլոր դռները. նրա կախարդական բանալին կաշառքն էր: Այդ բանալիով նա բացում էր չինովնիկական աստիճանականության բոլոր դռները՝ յասավուլից մինչև մովրով: Նրան չէր հետաքրքրում, թե ինչ խաբեությամբ էր նա թալանում մարդկանց. «Սաքոյի գործ դրած խելացի հնարքի շնորհիվ այս տարի շատ ընտանիք երեխայի ձեռքերը բռնած՝ ողորմություն սկսան հավաքել»²⁰:

Միկիտան Սաքոն մշակել էր գյուղացիներին ունեզրկելու այնպիսի գայթակղիչ մարտավարություն, որ գյուղացիները հեշտությամբ ընկնում էին նրա լարած թակարդը, նույնիսկ խարդախին ընդունում որպես բարերար:

¹⁸ Արիստակես Լաստիվերցի, Հայոց պատմություն, թարգմ.՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 47:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում, էջ 468:

Անսահման սիրելով հայ գյուղացուն՝ Պռոշյանը նկարագրել է նաև նրանց շարքերում եղած եզակի համարձակներին, որոնք բարձրաձայն բողոքում էին հանուն արդարության: «Հացի խնդիր» վեպում գործող անձանց մեջ առանձնանում է արդարադատ Հաքուլը, որն ասում է. «Խեղճ, աղքատ ժողովուրդ, էս ամենը քո ջանիցը պտի դուս քաշեն ու մարսեն»²¹: Հենց Հաքուլն էլ համարձակորեն գյուղացիներին բացատրում է, թե ով է Սաքոն. «Հա՛, շատ հասկացել եք,- ընդդիմացավ Հաքուլը,- գառը գլխին պահ տվածի պես սաղ մհալի արինն ա ծծում»²²: Հաքուլը միակ ըմբոստն է, մյուս գյուղացիները նրան խորհուրդ են տալիս լռել, վատամարդ չդառնալ, որովհետև «ըսենց եկել ա՛ ըսենց պտի գնա»²³:

Իրավացի է Պռոշյանը. Սաքոյի նման խաբեբաները չունեն ո՛չ կրոնական և ո՛չ էլ ազգային պատկանելություն: Չուր չէ, որ «Միկիտան Սաքոն» գլխում ասվում է, թե ոչ ոք չգիտեր Միկիտան Սաքոյի ծագումը: Բոլոր չար մարդիկ սատանայի գնդից են, իսկ բարի, ազնիվ, մարդասերները Աստծու հրեշտակների հետ կապ ունեն: Միկիտան Սաքոն սատանայի գումարտակից էր: Ի դեպ, աշխարհի բոլոր կրոններում էլ սատանան դևի կամ քաջքի կերպարով է՝ շատ ուժեղ ու հնարամիտ: Այդպիսին է նաև Միկիտան Սաքոն, որը վեպի վերջում դիմակագրվելու է, սակայն նոր կերպարանք է ստանում. կրոնափոխ է լինում ու Պարսկաստանում դառնում մուլլա:

Վեպի ԽԸ. գլուխը կոչվում է «Ի՞նչ եղավ Միկիտան Սաքոն»: Միկիտան Սաքոն դատաստանից փախչում է Պարսկաստան ու այնտեղ դառնում մուլլա. «Սաքոն այժմ թուրքացել, մուլլա էր դարձել և, չգիտեմ ընչի, գուցե քրիստոնեությունից Մահմեդի կրոնքը փոխվելու պատճառով, կոչվում էր ժողովրդիցը քեշիշ-աղա մուլլա Էլիազ»²⁴:

²¹ Նույն տեղում, էջ 428:

²² Նույն տեղում, էջ 429:

²³ Նույն տեղում, էջ 431:

²⁴ Նույն տեղում, էջ 641:

Յասավուլ Մարգարը, որն ամենից ավելի էր խաբվել Սաքոյից, հետապնդում է իր թշնամուն ու գտնում նրան Պարսկաստանում: Սակայն խարդախ-հնարամիտ Սաքոն տգետ մահմեդական ամբոխին համոզում է, թե այդ մարդը հայհոյում է Մուհամեդ մարգարեի սուրբ հավատը ու նրան պետք է քարկոծել: Կատարվում է մոլլա դարձած Սաքոյի կամքը. նա ազատվում է իր թշնամուց ու մի մեծ գյուղում շարունակում ապրել որպես մոլլա՝ նորանոր չարիքներ պատճառելով մարդկանց:

Պ. Պոռոյանի «Հացի խնդիր» վեպի գլխավոր հերոս Սաքոյի կերպարը ճշգրիտ բնութագրական ունի Ա. Բաբայանի «Պերճ Պոռոյան» մենագրության մեջ. «Պոռոյանի անսահման ստելությունը Միկիտան Սաքոյի նկատմամբ բացասաբար չի անդրադարձել գրական կերպարի բնութագրման վրա: «Հացի խնդիր» վեպի հերոսի բացասական հատկությունների խտացումը նրան դուրս չի բերել իրականության, հավանականության սահմաններից և չի խանգարել, որ նա դառնա ռեալիստական համապարփակ կերպար, եթե ոչ ամենահամայնապարփակը՝ Պոռոյանի ստեղծագործությունների մեջ»²⁵:

Պ. Պոռոյանի «Հացի խնդիր» վեպն այլևս չեն դասավանդում ավագ դպրոցում: Եվ շատ իզուր, որովհետև այն ունի մեծ ճանաչողական արժեք: Բացի այդ, կյանքի հարատև ընթացքը ապացուցում է, որ Միկիտան Սաքոյի կերպարը բնութագրական և վտանգավոր տիպ է բոլոր ժամանակների համար:

1953 թ. գրվել է Դ. Դեմիրճյանի «Տիպ և խարակտեր» հոդվածը, որն ունի գրականագիտական, ուսուցողական արժեք: Դասական մեծ գրողն այն գրել է իր ստեղծագործական հասուն շրջանում, երբ ընթերցողի դատին էր հանձնել գրեթե իր ողջ ստեղծագործությունը: Դեմիրճյանի՝ գրական տիպին տրված դիպուկ մեկնաբանությունը հանձնարարելի է բոլոր ուսուցիչներին և բանասիրական ֆակուլտետների ուսանողներին, որոնք պետք է դառնան հայ գրականության ուսուցիչներ. «Ի՞նչ բան է տիպականությունը: Դա անհատի մեջ արտացոլված,

²⁵ Ա. Բաբայան, Պերճ Պոռոյան, էջ 118:

կենտրոնացված, հավաքված այն հատկություններն են, որ բնորոշ են նրա միջավայրի, հասարակության, դասակարգի, էպոխայի համար: Այդպիսի հատկությունների կրողը կոչվում է տիպ»²⁶:

Այսօրվա դպրոցում շատ կիրառելի է էլեկտրոնային գրատախտակը: Ուսուցիչը տանն իր համակարգչով պատրաստում է մանկավարժական նորացված մեթոդներով գրականագիտական տիպ հասկացության ուսուցման ձևերը:

Նախ, ողջ դասարանը պետք է կարդա «Հացի խնդիր» վեպը: Դա շատ հեշտ է ստուգել: Ուսուցիչը փոխադրություն է հանձնարարում «Հացի խնդիր» վեպի առանձին գլուխները տանը՝ բաժանելով առանձին վերնագրերի միջև: Թե վեպի որ գլուխը աշակերտը պետք է գրի դպրոցում, նա կիմանա դասարանում: Սա իրական խթան է, որ աշակերտը կարդա ողջ վեպը, յուրացնի վերջինիս բովանդակությունը: Էլեկտրոնային գրատախտակի վրա երկու աշակերտ գրում են Միկիտան Սաքոյին և Խեչանենց Խեչանին բնութագրող այն հատկանիշները, որոնք ամենաբնորոշն են երկու տիպական կերպարների համար: Այդ հարցադրմանը ճիշտ պատասխանելու համար ուղեցույց կլինեն «Հացի խնդիր» վեպի երկու գլուխները՝ «Խեչանենց Խեչանը» և «Միկիտան Սաքոն»: Վեպում կան ժողովրդական գրույցներ, առածասացվածքներ: Առած-ասացվածքների մի փունջ անհրաժեշտ է առանձնացնել, որոնք այսօր էլ հայերն օգտագործում են առօրյա խոսքում: Այսպես, օրինակ՝

«Աղջիկը, որ կա, անկտրել ձմերուկա»:

«Աշխարհքիս մալն /գանձն ու հարստությունը/ աշխարհքումը պտի մնա»:

«Առաջնորդը ես եմ, բակլեն խաշած եմ ցանում»:

«Ավելի թիքեն փորը չի ծակի»:

«Թթու է, թան չի, ամեն մարդի բան չի»:

«Ղոնաղն Աստծունն ա»:

²⁶ Գրականագիտության ներածություն, Քրեատոմատիա, խմբ.՝ Է. Ջրբաշյանի, Երևան, 1984, էջ 136:

«Մեզք մեզքի կտանք, սարեր շուռ կտանք»:

«Ուրիշի ձեռքով փուշ բռնի»:

«Չեմ ուզում ջերս քցի»:

«Քոռն ի՞նչ կուզի - երկու աչք»:

Ահա այս առած-ասացվածքները հարկավոր է աշակերտների միջոցով բացատրել:

Եզրակացություն

«Հացի խնդիր» վեպը Պ. Պոռոջյանի գլուխգործոցն է: Դ. Դեմիրճյանն իր «Տիպ և խարակտեր» հոդվածում բնութագրելով, թե ինչ է գրական ստեղծագործության մեջ տիպը՝ որպես օրինակ հայ գրականությունից բերում է Միկիտան Մաքոյի կերպարը²⁷:

Խեչանենց Խեչանի կերպարը գրողի հայ գյուղացու երազային տեսակն է՝ բարի, մարդասեր, աստվածավախ, աշխատասեր, ազնվական գծեր ունեցող:

Միկիտան Մաքոն գրողի գրչի տակ այնքան տիպական ձևով է պատկերված, որ մինչև հիմա այն հայ կրթված մարդկանց շուրթերին հնչում է՝ որպես հասարակ անուն՝ նշանակելով մեծագույն խաբեբա:

«Հացի խնդիր» վեպն ունի ճանաչողական ու դաստիարակչական արժեք ու այն պետք է մնար ավագ դպրոցի հայ գրականության ծրագրերում:

²⁷ Գրականագիտության ներածություն, Քրեատումատիա, էջ 138:



ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական
գրադարանի տնօրեն
Բանասիրական գիտությունների թեկնածու*

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ «ՅՈՒՇԻԿՆԵՐ» ԳՐՔԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Ներածություն

19-րդ դարի հայ գրականության մասին խոսելիս Պերճ Պռոշյանի կյանքն ու գրական ժառանգությունը շրջանցելը պարզապես անհնար է, քանի որ այդ դարաշրջանում նա զբաղեցնում է կենտրոնական տեղերից մեկը: Լինելով իր դարաշրջանի գաղափարների, պատկերացումների, սովորույթների կրողը՝ նա այդ ամենն արտացոլել է իր ստեղծագործությունների մեջ՝ փորձելով ստեղծված կերպարների միջոցով դրանք փոխանցել հաջորդ սերունդներին: Նրա մոտ դա ստացվել է:

Պ. Պռոշյանի գրական ժառանգության մեջ ուրույն տեղ ունի «Յուշիկներ» գիրքը, որը պետք է համարել ոչ միայն նրա, այլև մեր՝ հետագա սերունդների ձեռքբերումը, քանի որ առ այսօր այն չի կորցրել իր ճանաչողական արժեքը: Սույն տպագրությամբ Պ. Պռոշյանը մի անգամ ևս փաստում է, որ հուշագրությունը՝ որպես ժանր, չի կորցնում իր արդիականությունը երբեք:

Մեր հետազոտության նպատակն է ներկայացնել Պ. Պռոշյանի «Յուշիկներ» գրքի ճանաչողական արժեքը: Առաջնային խնդիրներից մեկը գրքի արդիականության ընդգծումն է. այն շարունակում է մնալ

կարևոր աղբյուր հետազոտողների համար: Մեկ այլ խնդիր է գրքի գաղափարագեղարվեստական արժանիքների վերհանումը, որը հնարավոր կդառնա միայն այստեղ արտացոլված կերպարների և նրանց ներկայացման ձևերի համադրման շնորհիվ: Կարծում ենք՝ իրականացված աշխատանքը իր նպաստը կունենա պոռոչանագիտության զարգացման գործում:

«Յուշիկներ» գրքի տպագրությունն ու արդիականությունը

Պ. Պոռոչյանն իր «Յուշիկներ» գիրքը պատրաստել է տպագրության բավական հասուն տարիքում, կարելի է ասել՝ կյանքի մայրամուտին՝ 1894 թ. Թիֆլիսում¹, 1200 օրինակ տպաքանակով²: Այն, որ իր հուշերի տպագրությանը հեղինակը ձեռնամուխ է եղել միայն կյանքի վերջում, ունի իր տրամաբանական մեկնաբանությունը: Նախ՝ գրողն արդեն գտնվում էր այն տարիքում, որ կարող էր իրեն թույլ տալ վերլուծել անցած ճանապարհը և գնահատել: Երիտասարդ տարիքում նա չէր կարող դեպքերն ու դեմքերը գնահատել ու վերլուծել նույն հայացքով, ինչ ավելի մեծ տարիքում: Երկրորդ՝ Պոռոչյանն անցել էր գրական դպրոց, գրական ճանապարհ, հաղթահարել էր բազմաթիվ խոչընդոտներ, ձևավորել էր աշխարհայացք և դարձել էր այդ դարաշրջանի գրական հենասյուներից մեկը, որի խոսքը ազդեցիկ էր ու լսելի: Իր անցած ճանապարհին նա հանդիպել էր ժամանակի գրեթե բոլոր մեծություններին, որոնց հետ անձնական շփումները թույլ էին տալիս գրել նրանց մասին, գնահատել նրանց և, ամենակարևորը, վերլուծել: Ուրեմն, մահվանից 13 տարի առաջ հրապարակելով իր հուշերը՝ նա դրանք ի պահ է տվել՝ հետագա սերունդներին ասելիքը փոխանցելու ակնկալիքով:

Վերոնշյալից, սակայն, չպետք է եզրակացնել, թե գիրքը մեկ կամ երկու տարվա աշխատանքի արդյունք է: Մինչև 1880 թ. սկիզբը նա պարզապես գրի է առել իր հետ կապված անցքերը, իսկ 1880 թ. մտերիմների խնդրանքով գրի առածը բաժանել է շրջանների և համա-

¹ Պ. Պոռոչյան, Յուշիկներ, Ա. շրջան, Թիֆլիս, 1894:

² Պերճ Պոռոչյանցի համառոտ կենսագրությունը, Թիֆլիս, 1899, էջ 15:

կարգել: Տպագրության մասին մտածելը դեռ վաղ էր: Այն իրականություն է դարձել միայն 1894 թ.: Տպագրվել միայն առաջին շրջանը: Տիտղոսաթերթին նշված «Ա. շրջան»-ը փաստում է, որ հուշագրությունն ունենալու էր նաև շարունակություն, սակայն, ցավոք, Բ. պրակի մասին որևէ մատենագիտական տվյալ մեզ չի հասել: Այն պարզապես չի հրատարակվել՝ նյութական միջոցներ չունենալու պատճառով:

Գիրքը հրատարակվել է Թիֆլիսի Մովսես Վարդանյանի տպարանում, որն իր գործունեությունը սկսել էր 1881 թվականից, իսկ 1890-ական թվականներին համարվում էր Թիֆլիսի լավագույն, ինքնուրույն ձեռագիր ունեցող տպարաններից մեկը³:

Գրքի տպագրությունը հնարավոր է դարձել միայն համապատասխան գրաքննություն անցնելուց հետո: Դա ամրագրված է տիտղոսաթերթի դարձերեսին. «Дозволено цензурою Тифлис 31 августа 1894 г. г. Тифлис»⁴: Բուն շարադրանքից առաջ առկա է ձևագիր. «Նորին գերապատուութիւն սրբազան առաջնորդին Վրաստանի եւ Իմերեթի Տ. Գեորգ եպիսկոպոսի Մուրէնէանց նուէր որդիական խորին յարգանաց»... Ըստ հեղինակի՝ վերջինս առաջինն է խրախուսել «Յուշիկներ»-ի տպագրությունը ու դարձել նրա աջակիցը:

³ Վ. Մաղալյան., Հայկական գրատպություն Թիֆլիսում (XIX դար-XX դարասկիզբ), Պատմաբանասիրական հանդես, Երևան, 2013, թ. 3, էջ 62-82; Ա. Բաբայան, Հայ գիրքը և տպագրությունը, Երևան, 1963, էջ 26-27; Ռ. Իշխանյան, Հայ գիրքը. 1512-1920, Երևան, 1981, էջ 137-138:

⁴ Այսրկովկասում պաշտոնական գրաքննությունն ուժի մեջ էր մտել 1837 թ. դեկտեմբերի 23-ից Նիկոլայ I կայսեր № 10828 հրամանագրով, ըստ որի՝ Թիֆլիսում տեղական լեզուներով հրատարակված գրքերի գրաքննությունը ենթարկվելու էր Վրաստանի, Կովկասի և Անդրկովկասի երկրամասերի գլխավոր կառավարչի գրասենյակին (*տե՛ս* Ս. Պետոյան, Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2020, թ. 30, էջ 307): Սակայն հայկական տպագրության գրաքննության դեպքում այս որոշումն Այսրկովկասում փաստացի չի գործադրվել մինչև 1840-ական թվականների կեսերը (*տե՛ս* Ս. Պետոյան, Բազելյան բողոքական քարոզիչների Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827-1835 թթ.), «Հայագիտության հարցեր», Երևան, 2020, թ.1, էջ 49):

Նշենք, որ հուշագրությունը՝ որպես առանձին ժանր, նպատակ չունի ստեղծել կերպարների շարք, չունի գործողությունների հերթականություն, չունի վեպերին բնորոշ լեզվամտածողությունն ու պատկերավորման համակարգը: Այն ավելի շատ մարդկանց և ժամանակաշրջանի գնահատում է՝ հուշերը պատմողի հայացքով: Այս առումով Պ. Պռոշյանի «Յուզիկներ»-ը բացառություն չէ: Ի՞նչ է տալիս այն մեզ.

ա. Գրական դիմանկարների մի մեծ շարք: Իր երկում Պռոշյանը ներկայացրել է սեփական անհատական գործունեությունը, սակայն զուգահեռ կերտել է իր դարաշրջանի մարդկանց գրական դիմանկարները: Ի տարբերություն գրական կերպար կերտելու ընդունված պահանջների՝ Պռոշյանը դա արել է շատ աննկատ՝ իր կյանքի կարևոր իրադարձությունների ներկայացման շղթայի մեջ: Կերպարի ձևավորումն ամբողջական է դարձել միայն ու միայն տվյալ գործչի հետ շփումը ներկայացնելու համատեքստում:

բ. Իրադարձությունների ճշգրտում: Կամա թե ականա Պ. Պռոշյանն իր ողջ կյանքի ընթացքում հայտնվել է կարևոր իրադարձությունների շղթայում, որոնք ոչ միայն իր համար են վճռորոշ եղել, այլև հայ ժողովրդի: Հուշագրության մեջ բացակայում է այդ իրադարձությունների վերլուծությունը, քանի որ դա առաջնային նպատակ չէ, սակայն այդ իրադարձությունների հետ կապված մանրուքների ներկայացման շնորհիվ դրանք շունչ ու հոգի են ստացել, դարձել առավել ամբողջական: Օրինակ, հենց Պ. Պռոշյանի հուշագրության շնորհիվ ամբողջացել է այն, թե ինչպիսի գործունեություն է ծավալել Խ. Աբովյանը՝ որպես տեսուչ և գործնականում ինչպես է իրականություն դարձրել իր մանկավարժական նոր մեթոդները:

գ. Միջավայրի ստեղծում: Հուշագրություններն ընդհանրապես լավագույն միջոցն են՝ որևէ տարածաշրջանի միջավայրի պատկերը կոլորիտային ներկայացնելու համար: Պռոշյանի երկի շնորհիվ մենք միանգամից երկու միջավայր ենք տեսնում՝ հայրենի Աշտարակը և

Թիֆլիսը: Ինչպես են հագնվել մարդիկ, նրանց վարքն ու իրար հետ շփվելու մշակույթը, ինչպես են դա արել մտավորականները և ինչպես՝ սովորական մարդիկ, մարդկանց կենցաղն ու սովորույթները, գյուղի ու քաղաքի կոլորիտային պատկերները և այլն, սրանք բոլորը ուրվագծվել և ամողջացել են հենց Պոռոջյանի հուշերի միջոցով: Ավելին, նա դրանք ներկայացրել է չմիջնորդավորված՝ որպես փաստ կամ իրականություն: Նա ավելի շատ ամրագրել է այն, ինչ կար այդ ժամանակահատվածում, ամրագրել է հենց այնպես, ինչպես դրանք կան՝ առանց միջամտելու կամ ձևափոխելու: Եթե անգամ տվյալ երևույթը բացասական տարրեր ուներ, նա չի ձևափոխել ինչ-որ բան, թողել է հենց այդպես: Շնորհիվ չմիջնորդավորված ներկայացման՝ այսօր մենք բոլորս հնարավորություն ունենք պատկերացում կազմել այդ դարաշրջանի կյանքի, կենցաղի, սովորույթների, մարդկանց մասին ու վերականգնել անցյալի մի շարք պատկերացումներ:

դ. Հուշագրությունը պատմական կարևոր աղբյուր է, սակայն միայն պատմագրական տեղեկություններով չի սահմանափակվում. այն գրողի կենսագրությունն ամբողջական դարձնելու լավագույն միջոցներից է⁵: Այս առումով այն ունի նաև աղբյուրագիտական արժեք, քանի որ տվյալ դարաշրջանի պատկերի կամ որևէ անհատի ու իրադարձության մասին տվյալների ճշգրտումը անհնար է առանց այդ շրջանի մարդկանց հուշերի: Քանի որ Պ. Պոռոջյանի մոտ դրանք շատ են, բերենք միայն մեկ օրինակ:

Խ. Աբովյանի «Նախաշաւիդ»-ի հրատարակության տարեթվի և տպարանների մասին կարծիքներն առ այսօր իրարամերժ են: Մատենագետ Հ. Դավթյանը գիրքը նկարագրել է՝ ձեռքի տակ ունենալով առ այսօր մեզ հայտնի երկու թերի օրինակները (առանց անվանաթերթերի), որոնցից առաջինը (2-76 էջ, կազմի չափսը՝ 17x12 սմ, շարվ. չափսը՝ 16x9,7 սմ) պահպանվում է Ե. Չարենցի անվան գրականու-

⁵ Ա. Թորոսյան, Ղազարոս Աղայանի հուշագրությունը, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելս Սանթրոյանի ծննդյան 80-ամյակին, Երևան, 2018, էջ 195:

յան և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Ղ. Աղայանի ֆոնդում, իսկ երկրորդը (3–96 էջ, կազմի չափսը՝ 21,5x12,5 սմ, շարվ. չափսը՝ 16 x 9,7 սմ)՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (ՄՄ): Մատենագիտական նկարագրության մեջ Հ. Դավթյանը նշել է նաև, որ գիրքը տպագրվել է Թիֆլիսի Արզանյանց եղբայրների և Ներսիսյան դպրոցի տպարաններում՝ 1838, 1844–1845 թթ.⁶: «Նախաշավիղ»-ի 2 օրինակների թերի լինելն ու անվանաթերթերի բացակայությունը⁷ էլ ավելի են դարձել տպագրության տարեթվի և տպարանների շուրջ տարակարծությունների պատճառ: 1952 թ. խնդրի շուրջ հանդես են եկել Բանասերներ Ա. Բաբայանը, Գ. Սևակն ու Պ. Հակոբյանը: Առաջին երկուսի կարծիքով գրքի սկզբի 18 մամուլը տպագրվել է Թիֆլիսի Արզանյանց եղբայրների տպարանում 1838 թ., իսկ վերջին երկու մամուլը՝ Ներսիսյան դպրոցի տպարանում 1844–1845 թթ.⁸: Նրանց հակադարձել է աբովյանագետ Պ. Հակոբյանը՝ հավաստելով, որ գիրքը տպագրվել է միայն Արզանյանց տպարանում 1838 թ.⁹: Եղել են նաև այլ տեսակետներ:

Խնդրի շուրջ առկա է գիտական մեծածավալ գրականություն, սակայն խիստ արժեքավոր են նաև Պ. Պռոշյանի հուշերը՝ կապված Աբովյանի հետ: Դրանք նախ օգնում են պարզաբանել, թե որ տպարանում է տպագրվել գիրքը: Պ. Պռոշյանը Խ. Աբովյանին հանդիպել է իր ծննդավայրի ծխական դպրոցում սովորելու տարիներին¹⁰ : Խ. Աբովյանն Աշտարակի Շապուհ Շահնագարյանի դպրոց այցելել է 1846 թ.¹¹ և 3 օր մնացել է այնտեղ՝ շփվելով երեխաների հետ: Չորրորդ օրը՝ հրաժեշտի պահին, նա Շահնագարյանին խոստացել է ուղարկել

⁶ Հ. Դավթյան, Հայ գիրքը 1801–1850 թվականներին. Մատենագիտություն, Երևան, 1967, էջ 236:

⁷ Ա. Բաբայան, «Նախաշավիղ» պատմության շուրջը, «Գրական թերթ», Երևան, 1952, թ. 1, 1 հունվարի, էջ 3:

⁸ Ա. Բաբայան, Նշվ. աշխ., էջ 3–4: Գ. Սևակ, Խ. Աբովյանի «Նախաշավիղ» մի նորահայտ օրինակ, «Գրական թերթ», Երևան, 1952, թ. 1, 1 հունվարի, էջ 3:

⁹ Պ. Հակոբյան, Խ. Աբովյանի «Նախաշավիղ»-ի տպագրման թվականը, «Սովետական գրականություն և արվեստ», Երևան, 1952, թ. 7, էջ 164–171:

¹⁰ Պ. Պռոշեանց, Նշվ. աշխ., Թիֆլիս, 1894, էջ 13–21:

¹¹ Նույն տեղում, էջ 13:

մի գիրք, որով խորհուրդ է տվել կազմակերպել ուսուցումը: Խոստումն իրականացրել է մի քանի օր անց. նա ուղարկել է գրքի մի քանի օրինակներ՝ մեկը ուսուցչի համար, մյուսները՝ աշակերտների: Պ. Պռոշյանը հիշում է, որ դա Արզանյանց տպարանում տպված «Նախաշաւիդ»-ն էր: Նա ընդգծում է, որ տարբերություններ կան այս և երկրորդ՝ 1862 թ. տպագրության միջև: Պռոշյանը կարևորում է հատկապես առաջին տպագրության առաջաբանը՝ նշելով. «Յառաջաբանից երևում է, որ Աբովեանցն է առաջին անգամ սկսել մեր մէջ հնչական մետոդան՝ դեռ 40 թուականներումը»¹²: Ինչպես ինքն է գրում, հետագայում գիրքը կորցրել է և չի կարողացել առանձին հրատարակել առաջաբանը:

Պ. Պռոշյանի այս երկն այն եզակի աղբյուրներից է, որտեղ հիշատակվում է գրքի տպարանը, քանի որ բուն գրքի անվանաթերթի բացակայության պատճառով այն բացակայում է նաև գրքի վրա: Նույն այս վկայությունը օգնում է պարզաբանել, որ «Նախաշաւիդ»-ն ունեցել է երկու տպագրություն, որոնցից առաջինն ունի արժեքավոր առաջաբան:

1928 թ. Ե. Շահազիզն առաջ է քաշել գրքի տպաքանակն այրելու վարկածը¹³՝ հավելելով, որ Խ. Աբովյանը չի ընդունել գրքին վերագրված դիտողությունները, ինչի պատճառով այն մնացել է անավարտ: Հետո փորձել է ինքնուրույն տպագրել, բայց դրա օրինակները չեն տարածվել կա՛մ վատ որակի տպագրության, կա՛մ Վիրահայոց թեմակալ առաջնորդ Կարապետ արք. Բագրատունու հրամանով, ով հրահանգել է օրինակները հավաքել և այրել՝ իբրև աշխարհաբար գրված ձեռնարկ: Ե. Շահազիզն այրելու վարկածը հիմնավորել է՝ վկայակոչելով Ղ. Աղայանի մոտ պահպանված դասագրքի օրինակը՝ կից ձե-

¹² Նույն տեղում:

¹³ Ե. Շահազիզ, Խաչատուր Աբովյանը, (Յերեվանի գավառական դպրոցի տեսչության 1843–1848 թթ. թղթերի յեվ ակադեմիկոս Ֆրենի նամակների հիմունքով: Կարդացված է պատմական-հասարակական բաժնում 1928 թվի հունվ. 28 յեվ փետր. 25 նիստերում), «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», Երևան, 1928, թ. 3, էջ 139:

ռագիր բացատրական թղթով¹⁴: Ռ. Զարյանը, սակայն, անդրադառնալով նույն թղթին՝ ընդգծել է, որ այդտեղ այրելու մասին խոսք չկա¹⁵:

Ե. Շահագիզի առաջ քաշած այս վարկածը հերքվել է, քանի որ Պ. Պռոշյանը փաստում է, որ Խ. Աբովյանը հետագա տարիներին գրքի օրինակները բաժանել է մասնավոր անձանց, որոնցից երկուսը հասել է մեզ: Բհարկե, նա նշել է, որ իր և մյուս աշակերտների օրինակները ինքը հետագայում գտնել չի կարողացել, սակայն նրա վկայությունը, որ գրքի որոշ օրինակներ իրենց ձեռքին են եղել, խիստ կարևոր է:

Համադրելով գիտական փաստերը և Պ. Պռոշյանի արժեքավոր հուշերը՝ «Նախաշաւիդ»-ին նվիրված մեր հետազոտության մեջ մենք եկանք այն եզրակացության, որ Խ. Աբովյանի «Նախաշաւիդ»-ը տպարան մուտք է գործել 1838 թ. սկզբին, երբ Արզանյանց եղբայրները պաշտոնապես սկսել են իրենց տպագրական գործունեությունը Թիֆլիսում: Առաջին 18 մամուլը տպագրվել է հենց այս շրջանում, մինչև հեղինակի հովանավոր Հեսսենմյուլլերի մասին առաջին ահագանգի ստացումը, իսկ տպագրությունն ավարտել և գիրքը հեղինակին են փոխանցել 1844 թ. սկզբին՝ մինչև ապրիլ ամիսը: «Նախաշաւիդ»-ը տպագրվել է Թիֆլիսի Արզանյանց եղբայրների տպարանում: Ներսիսյան դպրոցում կամ այլ տպարանում տպագրելու վարկածը հերքվեց: Այն որպես դասագիրք չի գործածվել, օրինակները պահպանվել են հեղինակի մոտ, որոնք նա բաժանել է մասնավոր անձանց¹⁶:

¹⁴ Ղ. Աղայանի բացատրական թուղթը վերարտադրվել է «Նախաշաւիդ»-ի 1940 թ. տպագրության առաջաբանում (տե՛ս Խ. Աբովյան, Նախաշաւիդ կրթության ի պետս նորավարժից, լուսատիպ նմանահանություն, առաջաբ. և ծանոթագր. Ռ. Զարյանի, Երևան, 1940, էջ LXVIII–LXIX):

¹⁵ Նույն տեղում, էջ LXX:

¹⁶ Մ. Գրիգորյան, Խաչատուր Աբովյանի «Նախաշաւիդ» գրքի տպագրության հարցի շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2024, թ. 2, էջ 171–188:

Եզրակացություն

Որպես եզրակացություն՝ նշենք, որ Պ. Պռոշյանի հուշագրությունն առ այսօր ունի արդիական հնչեղություն ու ճանաչողական արժեք: Այն թույլ է տալիս մեզ վերականգնել անցյալի իրադարձություններն ու անհատներին այնպես, ինչպիսին նրանք եղել են և կան այսօր: Այստեղ ներկայացված են մի շարք գրողների, մշակութային գործիչների դիմանկարներ, որոնք վերածվել են կերպարների: Խիստ կարևոր է գրքի աղբյուրագիտական արժեքը, որն օգնում է վերականգնել պատմական փաստերը և կատարել խիստ կարևոր ճշգրտումներ:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և
միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի ասպիրանտ
Մեխյայի համալսարանի
բանասիրական
ֆակուլտետի ասպիրանտ*

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ ՇԻՐՎԱՆՋԱՂԵԻ «ԿՅԱՆՔԻ ԲՈՎԻՑ»-ՈՒՄ

Ներածություն

19-րդ դարի երկրորդ կեսը և 20-րդ դարասկիզբը պատմական իրադարձությունների, աշխարհաքաղաքական վայրիվերումների և փոփոխությունների, զիտատնտեսական առաջընթացի, մշակութային նորարարությունների ժամանակաշրջան էր: Այդ փոփոխություններից անմասն չմնաց նաև գրականությունը. գրական նոր ուղղություններ, հոսանքներ, ժանրեր, մեկը մյուսից հետաքրքիր ստեղծագործողներ, որոնք հետագա սերունդներին ժառանգեցին բարձրարժեք բազմաթիվ երկեր: Այս ժամանակաշրջանի հայ գրականության երկու աչքի ընկնող դեմքերից են Պերճ Պռոշյանն ու Շիրվանզադեն, որոնք, ապրելով ու գործելով նույն ժամանակաշրջանում՝ երկուսն էլ հայ դասական գրականության կարկառուն ներկայացուցիչ պետք է դառնային, երկուսն էլ մարդու մասին մտածող, մարդկային կյանքը մտածողի հայացքով դիտող, բոլոր նրբությունները նկատող, թերությունները քննադատող ու անարդարությունների դեմ իրենց գրչով պայքարող պետք է դառնային: Նրանցից ավագը՝ Պ. Պռոշյանն, իր ստեղծագործություններում նկարագրելով հայ գյուղացիության սոցիալ-կեն-

ցաղային դրությունը, գյուղացիների հայացքներն ու ըմբռնումները՝ անկրկնելի գեղարվեստական պատկերներով հարստացրեց հայ գրականությունը՝ դրա ամուր սյուներից մեկը դառնալով: Նրա «Մոս և Վարդիթեր»-ը «Խ. Աբովյանի «գրական դպրոցի» խոշոր հաղթանակն էր, նա դրդեց Միքայել Նալբանդյանին գրելու իր հռչակավոր «Կրիտիկան»՝ հայ քննադատական մտքի չգերազանցված փաստաթուղթը»¹:

Շիրվանզադեն իր հերթին նկարագրեց նոր դարաշրջանում քաղաքային միջավայրում ապրող մարդու կյանքը՝ դառնալով քննադատական ռեալիզմի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը հայ գրականության մեջ:

Երկու հեղինակները տարբեր միջավայրերում հանդիպելու բազմաթիվ առիթներ են ունեցել: Այդ հանդիպումների և այլ՝ հետաքրքրաշարժ դրվագների, Պ. Պոռոջյանի կերպարի մասին պատմում է Շիրվանզադեն իր «Կյանքի բովից»-ում, որը «կենսագրական ժանրի» առումով Մ. Նալբանդյանի «Հիշատակարաններ»-ից, Ղ. Աղայանի «Արություն և Մանվել»-ից հետո նորություն էր հայ գրականության մեջ: «Կյանքի բովից»-ը վիպական շատ տարբեր պարունակելով հանդերձ (հատկապես առաջին մասում), հիմնականում մեմուարային բնույթ ունի և իր տեսակի մեջ նորություն է հայ գրականության պատմության մեջ»²:

Քննարկում

Շիրվանզադեն Պոռոջյանի ստեղծագործությունների մասին տարբեր առիթներով հոդվածներ է հեղինակել, բարձր գնահատել «Մոս և Վարդիթեր» և «Հացի խնդիր» վեպերը, հարկ եղած դեպքում՝ քննադատել հեղինակին. օրինակ «Ցեցեր» վեպի մասին, որտեղ արհեստավարժ գրաքննադատի գրիչը չի վարանել և նշել է իր բարեկամի թերությունները: «Սակայն պ. Պոռոջյանը առհասարակ քիչ է նկարագրում, և նկարագրածն էլ ոչինչ սահունություն չունի: Ավելի անհա-

¹ Մ. Սարինյան, Պերճ Պոռոջյանի ստեղծագործությունը (*տե՛ս* Պ. Պոռոջյան, Երկերի ժողովածու յոթ հատորով, հտ. 1, Երևան, 1962, էջ 6):

² Մ. Աղաբաբյան, Ստեփան Զորյան, Երևան, 1955, էջ 156:

մացնում է պ. Պռոշյանը, երբ ձգտում է հումորով գրել, այսինքն՝ անել մի բան, որին ընդունակ չէ...»³: «Շիրվանզադեն Պռոշյանին շատ խիստ է քննադատում հենց նրա համար, որ վերջինիս լեզուն մշակված, արձակը «կոճկված» չէ, և կոճկագերծ վերնազգեստի տակից երևում են նաև ոչ պիտանի, անպետք լաթեր»⁴: «Կյանքի բովից»-ում Շիրվանզադեն հիշատակում է այս հոդվածի պատմությունը, որը առաջին անգամ տպագրվել է «Արձագանք» շաբաթաթերթում՝ 1889 թ.: Խոսելով հեղինակի մասին՝ նշելով, որ Պռոշյանը լիովին գիտեր հայ հին և միջնադարյան գրականությունը, հայոց պատմությունը, հայ եկեղեցու պատմությունը, Շիրվանզադեն իր հուշագրության մեջ ընդգծում է, թե Մխիթարյանների թարգմանություններից բացի՝ արտասահմանյան գրականությանը բնավ ծանոթ չէր, բացառությամբ մեկերկու հեղինակից, վերջիններիս էլ գիտեր լրագրական հոդվածներից, կամ էլ՝ ինչ-որ մեկի պատմածից: Իր վեպի մասին հոդվածին ծանոթանալուց հետո Պռոշյանը վշտանում է. «Եղբայր, երբ Ջուլան է գրում նման բաներ, գովում եք, երբ ես եմ գրում, պարսավում եք: Ինչու՞ ես ինձ վրա հարձակվում, դու ինքդ ռեալիստ չե՞ս»⁵:

Շիրվանզադեն բարձր է գնահատել նրա «ՄԱՐԴ» տեսակը: Պատահական չէ, որ «Կյանքի բովից»-ում իր կյանքում հանդիպած բազմաթիվ գործիչներից Շիրվանզադեն առանձին գլուխներ է նվիրել մի քանիսին՝ Բաֆֆի, Աբգար Հովհաննիսյան, Գրիգոր Արծրունի, Գամառ-Քաթիպա, Պետրոս Ադամյան, Գաբրիել Սունդուկյան, Ղազարոս Աղայան և Պերճ Պռոշյան: «Գյուղից էր եկել նա, գյուղացի էլ մնաց քաղաքում մինչև մահը: Ժողովրդի հարազատ զավակն էր նա՝ հայ շինականի լավագույն հատկություններով: Քաղաքը նրա միտքը տաշեց, հղկեց, բայց նրա բարոյական աշխարհը չապականեց» [էջ 164]: Շիր-

³ Ա. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 9, Երևան, 1955, էջ 133:

⁴ Ա. Քոչինյան, Շիրվանզադեի լեզուն և ոճը (*տե՛ս* Շիրվանզադեի ստեղծագործությունը (հոդվածների ժողովածու), Երևան, 1959, էջ 204):

⁵ Ա. Շիրվանզադե, Երկեր հինգ հատորով, հտ. 5, Երևան, 1988, էջ 169, 170: (Այսուհետ այս գրքից արված հղումները կնշվեն տեքստում – Հ. Ս.):

վանգադեն տալիս է Պ. Պոռոշյանի արտաքին նկարագիրը. «Միջահասակ, լայն կրծքով, կլոր ոսկրոտ երեսով, նեղ ճակատի տակ խոր ընկած սուր-սուր նայող աչքերով, նոր ճերմակող մազերով ու մորուքով» [էջ 164]: Ըստ Շիրվանգադեի՝ Պոռոշյանը հագնվում էր միշտ անխնամ, անփույթ, գլխարկը միշտ ճխլտված էր, օձիքը՝ տրորված, փողկապը՝ հնամաշ, կոճակները՝ բաց: Չայնը սուր և անախորժ էր և այնքան բարձր, որ «կարծես նրա համար քաղաքի տները լեռներ էին, փողոցները՝ ձորեր» [էջ 164]:

Շիրվանգադեն պատմում է Պոռոշյանի հավատացյալ քրիստոնյա, ջերմ կրոնապաշտ և լուսավորչական լինելու մասին և զարմանում է, թե ինչը խանգարեց նրան՝ քահանա ձեռնադրվելու հարցում. նա բարեկամ էր հոգևորականներին, սակայն, ըստ Շիրվանգադեի՝ քարկոծում և ատում էր նոր հովերով տարվող կրոնավորներին, այսինքն, վերին աստիճանի պահպանողական էր. «Ինձ համար անաստվածությունն քարոզող աշխարհականն ավելի հարգելի է, քան կեղծ հավատացյալը» [էջ 164],- մեջբերում է Պոռոշյանի խոսքերը Շիրվանգադեն:

Հուշագրության հեղինակն ընդգծում է Պ. Պոռոշյանի անհատականությունը՝ համեմատելով ժամանակի մյուս գրողների հետ: Ի տարբերություն մյուսների՝ նա տանել չէր կարողանում կուսակցական բաժանումները՝ դրանք համարելով «ազգային դժբախտություն» [էջ 165]:

Պ. Պոռոշյանը ընտանեսեր էր վերին աստիճանի և ընտանիքից դուրս հաճույք չէր ճանաչում: Նրա կարծիքով, ընտանիքի ամրությունը պետք է հաստատվի եկեղեցու օրհնությամբ: «Ներել չէր կարողանում Արծրունուն, նրա հակաեկեղեցական ամուսնությունը տիկին Քոչարյանի հետ» [էջ 165],- գրում է Շիրվանգադեն՝ անկեղծորեն շարունակելով, որ Պոռոշյանն իր տուն է այցելել միայն երկու անգամ, այն էլ միայն եկեղեցու օրհնությամբ կնոջ հետ ամուսնանալուց հետո: Կնոջ մահից հետո Պոռոշյանը կերպարանափոխվում է, մի քանի օրվա մեջ ծերանում: «Այդ օրը նա խոսում էր, շարժվում այնքան տարօրի-

նակ, որ մի պահ կարծեցինք, թե մարդը ցնորվել է» [էջ 165]: Նույն վիճակում է հայտնվում նաև ավագ որդու՝ որպես հեղափոխական ձեռքակալվելու և Սիբիր քաղաքներում օրերին: «Չեմ հասկանում սոցիալիզմը, ինչ ուզում ես ասա, չեմ հասկանում և չեմ ուզում. իմ որդին պիտի զոհվեր միայն իր ժողովրդի, իր հայրենիքի համար», Շիրվանզադեի հետ զրույցում ասել է Պռոշյանը [էջ 165]: «Կյանքի բովից»-ի հեղինակը պատմում է իր «Կործանվածը» դրամայի շուրջ բարձրացած աղմուկի մասին. շատերի կարծիքով այստեղ նկարագրված Սահառունիների տիպերը Շիրվանզադեն վերցրել է Պռոշյանից ու իր որդուց: Նույնիսկ դերասաններից մեկը Կ. Պոլսում Սահառունու հոր կերպարում բեմ է դուրս գալիս Պ. Պռոշյանի նմանակությամբ և դիմահարդարմամբ: Շիրվանզադեն սա կատարյալ թյուրիմացություն է համարում և, Փարիզում գտնվելով, հերքում է այս լուրը, նշելով՝ որքան է հարգում ու սիրում Պռոշյանին: «Պռոշյանն ամենաանկեղծ և ամենապարզասիրտ անձանցից մեկն է, որ երբևէ տվել է հայ գրական շրջանը» [էջ 167]:

Պ. Պռոշյանի մարդկային արժանիքներն ու անկեղծությունը ընդգծելու համար Շիրվանզադեն նրա կերպարը ներկայացնում է գրական շրջանակներում իրեն ծանոթ մյուս անհատների հետ համեմատության եզրեր տանելով: Ըստ նրա՝ Պռոշյանն ավելի ընկերական էր, քան Բաֆֆին և անհամեմատ ավելի պարզ: «Նա երբեք «մեծ գրողի» հովեր չէր վերցնում իր վրա, ինչպես Գամառ-Քաթիպան. համեստ էր չափից ավելի և հեռու ինտրիգներից» [էջ 167]: Այսպիսի համեմատություններ տեսնում ենք մի քանի պատմություններում՝ կապված այլ գործիչների հետ, որոնք «Կյանքի բովից»-ում ներկայացնում է Շիրվանզադեն. Բաֆֆու, Ղազարոս Աղայանի, Աբգար Հովհաննիսյանի, բժիշկ Ավետիք Բաբայանի, Մինաս Չերազի և ուրիշների հետ կապված պատմություններում ընդգծվում են Պռոշյանի վառ անհատականությունն ու բնավորության առանձնահատկությունները: Գաղտնիք չէ, որ երկու հանրահայտ վիպասանների՝ Բաֆֆու և Պերճ Պռոշյանի հարաբերությունները, մեղմ ասած, այնքան էլ լավ չէին: Շիրվանզա-

դեն պատմում է, որ Բաֆֆին քննադատում էր Պոռշյանի՝ շատ և արագ գրելու հատկությունը. «Պոռշյանը ներկարար է, լաթերը գցում է կարասի մեջ և դուրս բերում: Ոգևորության ժամանակ երբեմն այնպիսի հիմարություններ ես թխում, որ հետո կարդալով՝ ինքդ էլ ամաչում ես», - ասում էր նա [էջ 167, 168]: Շիրվանզադեն հիշում է, թե ինչպես Ծերենցի հուղարկավորության ժամանակ, երբ Բաֆֆին, հեզնելով Պոռշյանին, ասում է, թե հաջորդը նա է լինելու, Պոռշյանը սուր պատասխան է տալիս իրենից տարիքով փոքր վիպասանին. «Բարեկամ, շատ կուժեր մնում են, կուլաները կոտրվում են» [էջ 121]: Այս դեպքից երկու օր հետո մահանում է Բաֆֆին:

Պոռշյանը սկզբունքային էր. նա Գ. Սունդուկյանի հետ հրաժարվում է մասնակցել «Արձագանք»-ի խմբագրությունում կազմակերպված քննարկմանը՝ Գ. Արծրունու հրապարակախոսական գործունեության քսանհինգամյակը նշելու կապակցությամբ: Շիրվանզադեն սակայն, բարձր է գնահատում այս շաբաթաթերթի խմբագրի՝ Ա. Հովհաննիսյանի ազդեցությունը նրա գրական գործունեության վրա. «Վերջապես, նա էր, որ ասպարեզ տվեց Պերճ Պոռշյանի, Գաբրիել Սունդուկյանցի և Գամառ-Քաթիպայի գրիչներին» [էջ 132]:

Շիրվանզադեն պատմում է Պ. Պոռշյանի նյութական անապահովության մասին: Բազմանդամ ընտանիքի բեռը նրան շատ էր դժվարություն պատճառում: «Ոչ մինը հայ գրողներից այնքան դառնացած չէր կյանքից, որքան նա» [էջ 167]: Չնայած դրան, Պոռշյանն, ըստ Շիրվանզադեի, ամենահյուրասեր մարդն էր և սիրում էր լավ ուտել: Քիչ չեն ծիծաղաշարժ պատմությունները Պոռշյանի՝ շուկայից գնումներ կատարելու հետ կապված: Մի օր նրան ճանապարհին հանդիպում են Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Շիրվանզադեն և հումորով նկատում, թե ինչպես է Պոռշյանի գրպանը «շարժվում»: Պարզվում է, որ այնտեղ գրողը տեղավորել է գնած ձկներով լի տոպրակը: Աղայանն իր ահեղ ձայնով ամոթանք է տալիս Պոռշյանին, վերջինս էլ սաստում է նրան՝ ասելով, թե իր «լակոտները ցոցխալ շատ են սիրում, նրանց համար է գնել» [էջ 168]: Խոսակցության վերջում Աղա-

յանին «լռեցի չոբան» անվանելով՝ նա հաճույքով բոլորին հրավիրում է իրենց տուն՝ ձուկ ուտելու: «Նրա աչքում ամենքը հավասար էին, և ամենքի հետ վարվում էր անխտիր միևնույն պարզությամբ» [էջ 168]:

Շիրվանզադեի պատմություններից մեկն էլ կապված է Պ. Պռոշյանի՝ Շվեյցարիա և Ֆրանսիա կատարած ճանապարհորդության հետ: Փարիզ հասնելով, ուր նա գնացել էր Ալեքսանդր Մանթաշյանին տեսնելու և ամսական նպաստը բարձրացնելու համար, գրողը մտնում է եկեղեցի՝ ֆրանսիացի հոգևորականից պահանջելով իրեն օթևան տալ: Նահապետական մտածողությամբ Պռոշյանը կարծում էր, որ եկեղեցին ամենուրեք մի տեսակ հյուրանոց է լուսավորչական ճամփորդների համար:

Ավարտելով Պ. Պռոշյանի մասին իր հուշերը՝ Շիրվանզադեն վերջում կրկին ընդգծում է, թե մեր անցյալ դեմքերից ոչ ոք այնքան անաղարտ չի պահել իր ինքնությունները, ինչպես նա: Ճիշտ է, ըստ Շիրվանզադեի, նա չուներ Բաֆֆու երևակայությունը, Խ. Աբովյանի հայրենասիրական ավյունը, բայց կենսունակ էր ավելի, քան մեկն ու մյուսը: «Նա մեր գյուղացիական կյանքի, նրա վարք ու բարքի ու ավանդությունների ամենախոշոր պատկերահանն էր ավելի մանրակրկիտ, քան տաղանդավոր: Նրա ոճն անտաշ էր, նկարագրությունները հաճախ ճապաղ, բայց ճշգրիտ» [էջ 173],- եզրափակում է Շիրվանզադեն:

Եզրակացություն

Ամփոփելով կարող ենք ասել, որ Շիրվանզադեն իր «Կյանքի բովից» ինքնակենսագրական երկում ժամանակի մտավորականների և անվանի գործիչների կերպարների կողքին առանձնահատուկ տեղ է հատկացրել Պ. Պռոշյանի վառ կերպարի նկարագրությանը: Վերջինիս մասին հիշողություններում Շիրվանզադեն ընդգծել է նրա անհատականությունը, որը դրսևորվել է արտաքին և ներքին հատկանիշների նկարագրությամբ, ազգային, եկեղեցու, ընտանիքի հանդեպ Պռոշյանի անկրկնելի նվիրվածության մասին հավաստի տեղեկություններով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ էջ 4

ПРЕДИСЛОВИЕ էջ 6

FOREWORD էջ 8

ԱՆԷԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Ակադեմիկոս Արսեն Տերտերյանը

Պերճ Պոռոշյանի ստեղծագործության մեկնիչ..... էջ 10

ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ

Պերճ Պոռոշյանի «Հացի խնդիր»

վեպի լեզվական հիմքերը..... էջ 23

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Միքայել Նալբանդյանի «Կրիտիկա Սոս և Վարդիթերի»

քննադատական երկի արդիականությունը..... էջ 31

ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանահյուսական ժանրերի տեսակները «Սոս և Վարդիթեր» վեպում.

դրանց ուսուցողական արժեքը..... էջ 44

ԳՍՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

Տիպաբանական կերպարները Պերճ Պոռոշյանի «Հացի խնդիր» վեպում

և դրանց ուսուցումը ավագ դպրոցում..... էջ 56

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պերճ Պոռոշյանի «Յուշիկներ» գրքի ճանաչողական
արժեքը..... էջ 69

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

Պերճ Պոռոշյանի կերպարը Շիրվանզադեի «Կյանքի բովից»-ում.... էջ 78

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ

Հոդվածների ժողովածու

Ստորագրված է տպագրության :
Չափսը՝ Թուղթը՝ օֆսերը:
Տպագրությունը՝ օֆսերը: տպ. մամուլ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ
Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52-79-74
Էլ. փոստ lusakn@rambler.ru